№ 4 (170) XVI ՏԱՐԻ ԱՊՐԻԼ 1906

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

ԴԺՒԱՐՆ ԱՆՑԱՆՔ

Ծանր տարիներ էին նրանք, տանջանքի, մորմոքի, և յուսաբեկութեան ահաւոր տարիներ։ Որքա՜ն վիշտ, քանի՜ քանի արիւնոտ ողբերգութիւններ, որպիսի մեծ շարք անմեղ զոհերի, ի՜նչ անմոռաց կորուստ հսկայ ճակատների...

Ազատագրութեան պայքարը, սկսած անծայր և անսահման յափշտակութեամբ, լի գեղատեսիլ հեռանկարներով, մեզ շատ ծանր եկաւ, անչափ թանգ նստեց մարտիրոս ժողովրդին։ Իւրաքանչիւր բերկրանք իր ողջակէզն ունեցաւ. ամեն մի յաղթանակ, նոյնիսկ փոքրիկ և համեստ, իր արիւնաներկ վերջաբանը, գաղանային վրիժառութեան մի ահաւոր պայթիւն...

Որպիսի՜ մրցումն այլազան դէպքերի։

Մենք ունեցանք 61-րդ յօդւածը, բայց նա շուտով թաղւեց այն սարսափների մէջ, որոնք հետևեցին Էրզրումի դէպքերին, Վանի աղէտին, Համիդեան գնդերի անլուր և անսանձ բարբարոսութեան։

Մենք ունեցանք՝ 90-ական թւականներին՝ յեղափոխական Հայաստանը սրտառուչ երազանքներով. սակայն մարտիկ ոյժերի անդրանիկ գոչը, հազիւ լսելի դարձած, շանթահար եղաւ զնդանների մէջ և կախաղանների վրայ, կառուցւած սուլթանական վարպետների ձեռքով, ցաւատանջ երկրի բոլոր կողմերում։

Մենք ունեցանք ապստամբ Սասունը, պսակւած երկու անգամ՝ Գըլըֆըռ քարի հերոսական դիւցազներգութեամբ, բայց հազարաւոր ասկէրների դաւադիր գրոհը, միացած Եւրոպայի պաշտօնական ներկայացուցչութեան անորոշ, երկչոտ, նոյնիսկ երկդիմի քայլերին, արեան և արտասուքի մէջ խեղդեց յեղափոխական աւիւնը, հայկական ըմբոստութեան լաւագոյն ծրագիրը։

Մենք ունեցանք Զէյթունը, Խանասոր, Բանկի գրաւումը, ցոյցեր Կ. Պոլսում, հերոսական ընդհարումներ Վասպուրականում, յեղափոխական քաջագործութեան մի անմոռաց շարան սահմանագլխի կարևոր կէտերում, բայց այդ բոլորին բռնապետը մի պատասխան միայն տւեց—հալածանք, արիւն և կոտորած...

Մի օր Մայիսեան ծրագիր, միւս օր համատարած ջարդ։ Մի տեղ դեսպանների խորհրդաժողով՝ յանուն հայկական ինքնավարութեան, միւս տեղ՝ փաշաների գաղտնաժողով՝ յանուն Հայաստանի ոչնչացման։ Մի անգամ յեղափոխական յաղթանակ, միւս անգամ բռնապետութեան տիրապետումն։ Մի տարի ժպիտ, յոյս, երազանք. միւս տարի կնճիռ, ողբ, տանջանք... Դա էր մեր քաղաքական նորագոյն կեանքի բնորոշ պատկերը, մեր յոյսերի ու տառապանքների առօրեայ տեսարանը։

—

Բայց դժւարն անցաւ։

Մեր „քաղաքական կարաւանը" անցաւ վտանգաւոր „կիրճը", անցաւ ոչ թէ ջախջախւած, տրորւած և յուսաբեկ, այլ լի մեծ յոյսերով, գործի հպարտ գիտակցութեամբ, վէրքը ճակատին, բայց սրտով՝ անվհեր ու ամրապինդ։

Գաղափարը մնաց յաղթական։

Երկրի մէջ՝ ժողովրդական խաւերը այլ ևս քարեր չեն նետում յեղափոխութեան հասցէին։ Հայկական քաղքենին լուռ է, խոնարհւած և որոշ դէպքերում նոյն իսկ համամիտ։ Կղերը այլ ևս նախկին ամբարտաւանութեամբ մաղթանքներ չէ շռայլում ոճրագործ դահիճների գործին ու անւան։ Ըմբոստութեան գաղափարը այլ ևս հալածական չէ և կամ յատուկ մի քանի մոլեռանդներին, այլ լայն ծփանքներով տարածւած ժողովրդական մտածմունքի մէջ, ուր խոնարհութեան սարկամիտ քարոզները յարուցանում են լոկ արհամարհանք, հեգնութիւն ու ծիծաղ։

Երկրից դուրս, արտաքին աշխարհում, հակառակ մեր թշնամու գործ դրած ջանքերին, ոսկուն ու դաւերին, հակառակ պաշտօնական և անպաշտօն պրօպագանդին, հասարակաց կարծիքը համակրանքի և հիացման դաշն կապեց հայկական յեղափոխական շարժման հետ։ Նորագոյն Եւրոպան վերջնականապէս յարեց մեր դատին։ Անդառնալի կերպով անցաւ Հանօտոյեան շրջանը Ֆրանսիայում։ Հանօտօն, իբրև ուղղութիւն, թաղւած է ընդ միշտ։ Եւ սրանից յետոյ ո՛չ ֆրանսիական պարլամենտում, ուր մեր դատն ունի ուժգին, հեղինակաւոր պաշտպաններ, ո՛չ անգլիական պարլամենտի մէջ, ուր երբեմն լռելեայն լսեցին Սոլսբրեան ժխտումները, ո՛չ իտալական ազգի պատգամաւորների ժողովում և ոչ էլ Անդրատլանտեան Մեծ-Հանրապետութեան կօնգրէի մէջ անպատիժ չեն մնայ այն դիպլօմատները, որոնք կը փորձեն վարագոյր գցել մեր տանջանքների, մեր զոհերի, մեր պայքարի վրայ, ծածկելու համար այն ոճիրնե-

ը, որոնք յղացուած են Եըլդըզի կամ իր դաշնակից պալատի գաղտնարաններում։ Նոյնիսկ գերմանական բայեստագի մէջ, յայտնի իր անտարբերութեամբ, այլ ևս դժուար կը լինի նախկին թեթևութեամբ արտասանել այն սինիկ խօսքերը, որոնք երբեմն անմահացրին բիսմարկեան հակահայկական քաղաքականութիւնը։

Սակայն կարևորն ու գլխաւորը այդ չէ, այլ այն, որ հայկական շարժման տասնամեայ երդուեալ թշնամին, ցարիզմը, նա որ վեց նահանգները և Արարատեան աշխարհը լցրեց դիակներով և արեամբ, ջարդուած է, ընկած իր պատուանդանի բարձրութիւնից, անկարող թելադրումներ անելու, անընդունակ շարժելու հայասպան քաղաքականութեան լարերը...

Մեր թշնամիներից մէկը, ամենադժնեան, զօրեղագոյնը և ամենից վտանգաւորը յետ է նահանջում—սա մեր յեղափոխական պատմութեան այսօրեան խոշորագոյն փաստն է, որ սարսափ և իրարանցումն է գցել սուլթանի պալատի մէջ, բերկրանք եւրոպական շրջաններում, և որը բարձրաձայն հրաւիրում է մեզ դէպի նոր կռիւ, նոր յոյսեր, և նոյնիսկ դէպի աւելի խոշոր և լայն ձեռնարկներ...

Եւ „Մոսկովեան միապետի“ անկումը ոչ միայն գաղափարական տօն է յեղափոխական շրջանների համար, այլ և գործնական մի սաստ այն բոլոր հակաքաղաքակիրթ, բռնապետութեան „հացին իւղ քսող“ տարրերին, որոնք Մերձաւոր Արևելքի մէջ, մի օր կովկաս, միւս օր Թիւրքաց-Հայաստանում, մի օր Փոքր-Ասիական նահանգներում, միւս օր Պարսկաստանի մէջ, անպատիժ յանդգնութեամբ ոտի էին կանգնում ի պաշտպանութիւն հին կարգերի, հին գաղափարների, հին բէժիմի։ Գաղտնիք է միթէ, որ երբ 1896-ին կամ 1904-ին քիւրդ հրոսակները, թիւրք փաշաները արիւն էին տարածում հայկական գիւղերում և քշում հայ ժողովրդի բնակիչները երկրից դուրս, նրանք ոգևորուած էին ոչ միայն Կ. Պոլսի աջակցութեամբ, այլ և այն մեծ ու աշկարայ հովանաւորութեամբ, որ գալիս էր Ռուսաստանից, ռուսական բռնապետ կառավարութիւնից։ „Սպիտակ ցարը հայերի դէմ է“—ահա աղդանշանը, որ թագաւորում էր ամէն տեղ, ուր ոտք էր դնում հայ յեղափոխականը, այն գրգռիչ հրահանգը, որից այնքա՞ն սիրտ էին առնում և՛ Էրզրում, և՛ Սասուն, և՛ Բաղու, և՛ Նախիջևան, այն գիւթական խօսքը որ թևեր էր տալիս մահմէտական հրոսակախմբերին՝ անցնելու Երասխը և նետուելու „Ռուսական Արծի“ հովանուն մատնուած դժբախտ գաւառների վրայ...

Աւերիչ, ապականող ու մահաբեր հոսանքներին թև ու թիկունք այդ ուժը այլ ևս չը կայ. նա զրկուած է իր հմայքից, նա վարկաբեկ է, ցեխի մէջ ընկած։ Այդ բերկրալի իրողութիւնը մի լաւ դաս է մեր միւս թշնամիների համար, յեղափոխական մի մեծ նեամուն, որ ինչպէս վիթխարի ջահ լուսաւորում է մեր անցնելիք ուղին, և նոր լոյս սփռում վշտոտ անցեալի վրայ, այնքա՞ն հարուստ արիւնով, այնքա՞ն առատ յուռնտեսութեամբ...

„Վտանգաւոր կիրճն“ անցանք։

Ցօշոտուած, վիրաւոր հայ ժողովուրդը, դուրս եկած ստրուկների շարքերից—Անդրկովկասեան դէպքերն՝ ապացոյց—հպարտ ու յանդուգն նայուածքով է դիտում թշնամուն։ Սուլթանն ու ցարը այլ ևս սարսափ չեն ազդում, այլ նողկանք։ Բռնութիւնը այժմ լացի ու ողբի աղբիւր չէ, այլ մարտական հրաւէր, որ տանջուած ժողովրդի նորագոյն սերունդը ընդունում է սղմած բռունցքով, յաղթութեան ժպիտը շրթունքներին...

„ԴՐՕՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՈՒՂԱՐԿԻԱԾ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ)

Զինաթափութեան պատրւակի տակ՝ կառավարական բռնութիւնները շարունակւում են։ Գանձակի և Շուշու կողմերից եկող լուրերը վրդովեցուցիչ են։ Անա վերջին հեռագիրները, հաստատւած նոյնիսկ պաշտօնական աղբիւրներից։—Վարանդայի սարսափները անպատմելի են։ 400 կօզակներ թնդանօթներով, գաւառապետ Ֆրէյլիխի, հաշտարար միջնորդ Երմօլայեվի և սպայ օսետին Հաջիեվի առաջնորդութեամբ ոմբակոծեցին Տող գիւղը։ Փլատակեցին մի քանի տներ. խլեցին 25 հրացան և 900 ռուբլի տուգանք։ Անխնայ կերպով տանջեցին գիւղացիներին, որոնցից 15 հոգու՝ մերձ ի մահ։ Մնացած գիւղացիները փախան մերձակայ լեռները և անտառները, թողնելով գիւղը բախտի բերմունքին։ Գազանացած կօզակները՝ խրախուսւած Երմօլայեվից՝ սկսեցին կողոպտել տները, թալանել ինչ որ հնարաւոր էր. կոտրտում էին տնային իրեղէնները, պոկում կանանց զլխի զարդարանքները։ Ֆրէյլիխը և Երմօլայեվը կօզակներին ուղարկեցին Տաղլար, Օզուխ և Ցօս, որտեղ տեղի ունեցան նոյն բարբարոսութիւնները։ Խլւած են մի քանի հրացաններ Տաղլարից։ Տներն աւերւած ու այրւած են։ Տակն ու վրայ արեցին ցորենի և գարու ամբարները, այգիների ցանկապատները, ոտնակոխ են տրւած դաշտերը։ Գազանային ինստինկտները սահման չունէին՝ կօզակները բռնաբարեցին կանանց, մատաղ աղջիկներին։ Բռնաբարում էին ծնողների և ազգականների աչքի առաջ. պատկերը զարհուրելի ու քստմնելի էր, նկարագրութեան ատեն մի հնարաւորութիւնից դուրս։ Եղան խելագարութեան և անձնասպանութեան դէպքեր։ Ֆրէյլիխը, Երմօլայեվը և Հաջիեվը հանդիսաւոր կերպով հրաժեշտ տուին ժողովրդին և հեռացան կօզակների երգերի ուղեկցութեամբ։ Հայ գիւղացիները սոսկալի դրութեան մէջ են։ Կատարած բռնութիւններն ու թալանը յիշեցնում են Լէնզէմուրի, Զինզիզխանի, Շահաբասի ժամանակները։ Նոյնպիսի գազանութիւններ կօզակները կատարել են նաև ուրիշ հայկական գիւղերում։ Նորագոյն տեղեկութիւններ, քաղւած ականատեսներից, անկարագրելի են։ Թիֆլիսի հայոց շրջաններում վրդովմունքը մեծ է։ Փոխարքային ներկայացաւ պատգամաւորութիւն՝ պահանջելով պատժել յանցաւորներին։ Եթէ կառավարութիւնը այս անգամ էլ երկդիմի դիրք բռնէ՝ յեղափոխական խմբերը նորից երևան պիտի գան՝ յարգել տալու արդարութիւնը։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԵՒ ԻՏԱԼԻՈՅ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Սիրով հիւրընկալում ենք Դաշնակցութեան պաշտօնական օրգանի էջերում ներկայ յօդուածը, որ պատկանում է իտալացի մի պրոֆեսորի գրչին և գրուած է յատկապէս „Դրօշակի" համար։ Յօդուածագիրը, որ թաքնուած է կեղծ անուան տակ, հայկական դատի ջերմ բարեկամներից մէկն է, մասնակցող մեր հարցի պրօպագանդին Իտալիայի մէջ և ջերմ կողմնակից իտալական կառավարութեան վճռական միջամտութեան՝ յօգուտ Թիւրքահայ դատի շուտափոյթ լուծման։

Եթէ ուշիուշով դիտուին այն պատճառները, որոնց համար Թիւրքիան, ամենաանարգ կերպով, կը հալածէ Հայերը, և Եւրոպան, որ սակայն շատ քիչ կը միջամտէ Պալքաններու և Կրետէի ժողովուրդներու պաշտպանութեան համար և անխռով թոյլ կուտայ որ այս կոտորածները կատարուին, դժուար չէ տեսնել որ մէկ պատճառ միայն կայ այս կրկին իրողութիւններուն, այն՝ որ Գերմանիան պաշտպան և զօրավիգ է Թիւրքիոյ։ Այս ուժն ու պաշտպանութիւնն է, որ թոյլ կուտան սուլթանին բանի տեղ չը դնել եւրոպական կառավարութիւններու զգացումները և փափաքները, այս ուժն ու պաշտպանութիւնն է որ, Եւրոպայի մէջ ահաւոր պատերազմ մը առաջ բերելու վախով, կը կանգնեցնեն պետութիւնները, որ սակայն կուզէին միջամտել՝ Հայոց ինպաստ բան մը ընել, անոնց օգնութեան հասնելու համար։

Գերմանիոյ այդպէս ընելուն պատճառը շատ պարզ է. միևնոյն պատճառն է որ զայն կը մղէ իր խորհուրդներով, սպաներով, զէնքով և դրամագլխով, օգնել Թիւրքիոյ՝ Մակեդոնիոյ ժողովուրդներուն դէմ մղած կռւին մէջ։ Թիւրքիոյ պահպանութիւնը և կոտորածները Գերմանիոյ համար անհրաժեշտ են, որովհետև արևելքի մէջ ապագայ նուաճումներու ճամբայ կը բանան անոր։

Իրողութիւն մըն է թէ, բոլոր անոնք որ կը հետաքրքրուին այս հարցով, գիտեն որ Գերմանիան կը տենչայ միջերկրականեան մեծ պետութիւն մ'ըլլալ, ուստի կուզէ Միջերկրականի վրայ ազատ դուռ մը ունենալ (ասոր համար է որ քիչ մնաց Ֆրանսայի հետ պատերազմ ընէր Մարոքի առթիւ), Ադրիականի վրայ կուզէ Տրիեստը ունենալ իբր վաճառականութեան դուռ (այս է պատճառը որ կը մղէ Աւստրիան ամենախիստ կերպով հալածել Հապսպուրկներու հպատակ իտալացիները), կուզէ գրաւել բոլոր Աւստրիան (այս պատճառով Գերմանիոյ համագերմանականները հոն սարսափելի պրօպականտ կընեն և աւստրիական կառավարութեան տէրը ըլլալով՝ զայն իրենց յաղթութեան և անոր կորուստին կը գործածեն) և կուզէ աշխարհակալել բոլոր Պալքանները (ասոր համար է որ կը կռուի այդ երկրի բոլոր անկախ պետութիւններուն դէմ և իր բոլոր ուժով կ'օգնէ սուլթանին արգիլելու որպէսզի այդ ժողովուրդները, որ դեռ իր հպատակներն են, չազատուին, որովհետև այդ ատեն իր ծրագրին իրագործումը մեծապէս պիտի վտանգուի)։

Բայց երբ Գերմանիան Պօլիս կամ Սելանիկ հասնի, այդ պիտի համարուի դէպի Արևելք իր առաջխաղացութեան առաջին հանգրուանը միայն, ահա թէ ինչու փոքր Ասիոյ մէջ կը պատրաստէ այն միւս ճանապարհը շատ գիտնականօրէն կազմակերպուած և կորովիօրէն գործադրուած աշխատասիրութիւնով մը։ Այդ երկրին ամբողջ տնտեսական կեանքը գերմանացիներու ձեռքն է, որոնք կը շահագործեն անոր հողագործութիւնը, առևտուրը, ճարտարարուեստը, հանքերը և այլն։ Երկաթուղին որ Իսկիւտարէն պիտի ձգուի մինչև Պարսկական ծոցը և փոքր Ասիոյ երկայնքը և լայնքը կտրէ անցնի, նպատակ ունի, մէկ կողմէն այդ երկիրները Գերմանիոյ բացարձակ տնտեսական մենաշնորհը դարձնել և միւս կողմէն դէպի Միջին և Ծայրագոյն Արևելք գերմանական արշաւանքի ճամբան բանալ։

Արդ, այս ճամբուն էն կարևոր կէտին վրայ, որ անաւիկ բնական ամրոց մը կը կազմէ, կը գտնուի Հայաստանը, ուր կը բնակի աննուաճելի ժողովուրդ մը, որ ամէն բանի պատրաստ է իր ստրկութեան վերջ դնելու համար։ Ահա թէ ինչու հայկական կոտորածները եւս հարկաւոր են համագերմականութեան առաջխաղացութեան համար դէպի Հնդկաստան և Ծայրագոյն Արևելք, ինչպէս մակեդոնական ջարդերը հարկաւոր են պալքաններուն տիրելու համար։ Ահա թէ ինչու Գերմանիան կ'օգնէ Թիւրքիոյ անոր կոտորածներուն մէջ, ահա թէ ինչու զայն կը պաշտպանէ միւս պետութիւններուն դէմ, որոնք կուզէին արգիլել այս սարսափները։

Արդ, այս պետութիւնները պէտք է որ հետզհետէ իրենց ուշադրութիւնը դարձնեն այս հարցին վրայ, որովհետև զուտ մարդկայնական շահերէն անդին կանգնի, շահեր որոնք կը մղեն մարդիկ անմեղներու կոտորածներուն դէմ բողոքելու։ Այդ հարցը կեանքի և մահու, անկախութեան կամ ստրկացումի հարցն է Միջերկրականի ազգերուն համար։ Ներկայիս Իտալիոյ, Ֆրանսայի և Անգլիոյ մէջ սերտ համաձայնութիւն կայ. իրենց մէջ բաժանած են ազդեցութեան գօտիներ առանց ոևէ ժողովրդի իրաւունքները բռնաբարելու։ Սակայն այս համաձայնութիւնը, այս անդորրութիւնը գոյութիւն ունենալէ պիտի դադրի իսկոյն եթէ Գերմանիան Միջերկրանի մէջ ոտք կոխէ։ Իր ազմկայոյզ և բուռն քաղաքականութիւնով ամէն րոպէ պիտի սպառնար պատերազմը հասցնել, եթէ Միջերկրականի պետութիւնները անոր խոնարհ ծառաները չըլլային։ Իբրև քաղաքակիրթ և խաղաղասէր ժողովուրդներ՝ բնաւ մեր շահերուն չգար այդ։ Միջերկրականի մէջ Գերմանիոյ յաղթանակը եթէ ընդլծէ ալ միւս պետութիւններ կամ ստիպէ զանոնք միշտ արթուն մնալ, պիտի մղէ մեր երկիրը բացարձակապետութեան ճամբուն մէջ, պատերազմի ճամբուն մէջ իր բոլոր արհաւիրքներով։ Բնական է որ հակառակէինք ատոր։

Միջերկրականի պետութիւնները արդէն ամէնքն ալ այս պահուս, Ալժէզիրասի խորհրդաժողովին համաձայնած են Միջերկրականի մէջ Գերմանական ոտնձգութեան առաջին փորձին դէմ։ Բայց Գերմանիան շատ յամառ է և գոռոզ՝ նորէն այդ փորձը չկրկնելու համար այս ու այն հարցին մէջ։ Հերիք է որ դէպի Արևելք առաջխաղացութեան մէջ քայլեր առնէ. մենք արդէն ապացոյց մը ունինք, երբ Թասոս կղզին, Սելանիկի դիմաց, հանքային շահագործումի ձևին տակ գրաւեց և ուր փոքրիկ պատերազմանաւ մը պիտի պահէ։ „Գերմանիոյ իր

Միջերկրական պետութիւն", սկզբնաւորութիւնն է այս Ամէն հաւանականութիւն կայ ուրեմն որ ան առաջ մղէ իր գործունէութիւնը թէ Պալքաններուն, թէ Փոքր Ասիոյ մէջ ի վնաս Մակեդոնացիներուն և Հայերուն։

Ի՞նչ պիտի ըլլայ եւրոպական միւս պետութիւններու գործը, քանի որ Գերմանիան ծածուկ կու

ճմլիկ իր բազուկները պէտքէ դնէ ի պաշտպանութիւն ժողովրդի մը, որ այսօր՝ երէկի տառապանքներով կը տառապի և իր հրաշալի յատկութիւններով ցոյց կուտայ որ մեծապէս արժանի է ազատութեան, որով պիտի կրնայ լայն և հզօր հարկաբաժին մը տալ աշխարհի առաջադիմութեան:

ՎԻՏՏՕՐԻՕ Ր. ԴԻ ՕԼԻՎԻԵՐԻ

ՀՌՈՄ
4 ապրիլ, 1906

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ՆԱՄԱԿ ԿԻԼԻԿԻԱՅԷՆ

(Թաղւածք եւրոպացի ուղեւորի մը նամակէն)

Հալէպ, մարտ 5

Հայերու դէմ ժամանակէ մ՚ի վեր սկսած նոր խըստութիւններն և ձերբակալումները կը շարունակուին:

Վերջերս Զէյթունէն, Մարաշէն, Ատանայէն և Հաճընէն նոր ձերբակալուածներ բերին հոս: Առհասարակ աչքի զարնող հայերու վիճակը շատ վատ է, մանաւանդ Զէյթունի հայերունը: Այնտեղի զինուորական հրամանատարը վերջերս մեռաւ: Այս ձերբակալութիւններու և ձեռք առնուած խստութիւններու պատճառը ան էր: Նոր հրամանատարը իր պաշտօնի գլուխն հասնելուն՝ պիտի սկսի տեղւոյն վրայ քննել խնդիրը և քննութեան արդիւնքը պիտի տեղեկագրէ Հալէպ: Գըլխաւորաբար Զէյթունի նկատմամբ գործադրւած խըստութիւններու հետեւանօք տեղւոյն առաջնորդ Խապաեան վարդապետը իր հրաժարականը ներկայացուց, որ չ՚ընդունւեցաւ: Հայոց շրջանակներու մէջ կը պատմեն, թէ Զէյթունի Աւագերէց Տ. Կարապետ քահանան այս գործերու մէջ շատ վատ դեր կը խաղայ:

Հալէպի նոր կուսակալ Նազըմ փաշան (Տիգրանակերտէն հոս փոխադրւած) շատ անգութ և միանգամայն հայու դաժան մըն է, և նա է որ շրջակայ վայրերու մէջ իբր քաղաքական յանցաւոր ձերբակալածները Հալէպ փոխադրել կուտայ, յանցաւորները ինք անձամբ քննելու և դատապարտել տալու:

Ռուսաստանէն նոր գաղթած չէրքէզներ՝ թւով տասն հազարէն աւելի, տեղաւորւեցան Կիլիկիոյ որոշ կէտերու վրայ, մասնաւորապէս Զէյթունի շրջակաները: Այս անկոչ հիւրերու համար „խանէ“ կը հաւաքւի՝—մինչև իսկ բռնութեամբ: Ամէն տեսակ հարկեր նոյնպէս վերջին ծայր խստութեամբ կը ժողվին: Ընդհանրապէս Կիլիկիայի վիճակը շատ աննախանձելի է:

Յունւար 4

Թիւրք կառավարութիւնը Զէյթունի 1895-ի պատերազմի տասնամեակը կ՚ուզէ տօնել... վրէժխնդրութեամբ: Զէյթունի վրայ չափազանց նեղիչ և անհանդուրժելի հսկողութիւն, բոլոր քաղաքներու մէջ՝ իբր քաղաքական յանցաւորներ՝ երիտասարդներու հաւաքական ձերբակալում, ևն ևն: Ահա փաստեր: Ատանայէն 6 հոգի ձերբակալւելով հոս փոխադրւեցան: Մարաշ բանտարկւած են 25 է աւելի անձինք և մօտերս Զէյթունէն Մարաշ պիտի բերւին 25-ի մօտ նոր ձերբակալւածներ: Զէյթունի դրութիւնը շատ տագնապալի է:

Թուական ժամանակ զօրանոցի մէջ գտնւող զօրքեր ամբողջ շաբաթներ առանց հանւելու կը պառկէին գիշերները և փոքր առիթի մը կը սպասէին ժողովրդի վրայ յարձակելու:

Ինչպէս յայտնի է, 1895-ի հաշտութեան պայմաններէն մէկն էր, որ թիւրք կառավարութիւնը Զէյթունի մէջ զօրք չը պիտի կրնայ մտցնել՝ առանց գիտութեան եւրոպական պետութիւններու: Իսկ վերջին ձերբակալութիւններու առթիւ ահագին թւով զինւորներ մտած են Զէյթուն: Նշանները լաւ չեն: Թիւրք կառավարութիւնը, կ՚երևի, յարմար առիթ կ՚որոնէ իր մշտական ծրագիրը գործադրելու:

ՆԱՄԱԿ ՍԱՍՈՒՆԷՆ

(Ականատեսի գրած)

Յունւար 5

Սասուն կառուցւած զօրանոցները, ինչպէս գիտէք, չորս կէտերու վրայ հիմնւած են. առաջինը՝ Տափիկ, երկրորդը՝ Սէմալի նոր եկեղեցւոյ մօտ, երրորդը՝ Տալւորի Վերին գիւղ և չորրորդը՝ Կէլիէ Գուզան՝ Բլքարի մօտ Խւրաքանչիւրի մէջ կը մնան չորս հարիւրէն մինչև հինգ հարիւր զինւոր: Սակայն հետզհետէ կը պակսեցնեն. բայց ի՞նչ օգուտ, ժողովուրդին այնպէս նեղութիւններ կուտան, որոնց նկարագրութիւնը մեր ուժէն վեր է: Արդէն անոնց գազանութիւնը բոլորին յայտնի է՝ մանաւանդ հայերու դէմ: Ժողովուրդը օրւան հացի կարօտ է: Մուշի դաշտէն վերադարձածները իրենց համար մէյ մէկ հիւղակ սարքեր են, և երջանիկ են Մշոյ դաշտի ժողովրդէն:

Իսկ Մուշի և դաշտի մէջ թահսիլտարներ նոր օրէնք հաստատած են: Օրինակի համար, գիւղի մէջ եթէ կայ տուն մը որ կարող է իր օրական հացը ձեռք բերել, չքաւորներու տուրքն ալ անկէ կը պահանջեն. խեղճ գիւղացին արդէն ոչինչ չունի, իսկ քաղաքացին ստիպւած է սեպհական հողեր ծախել տաճիկներուն և այդպիսով ազատել իր հոգին:

Բանտարկեալներու թիւը չափէ դուրս է: Միայն Դաշտէն բռնւածներու թիւը մօտ 400 է: Ոչ քննութիւն կը կատարւի և ոչ օրինական պատիժ կը նշանակւի, այլ կը տառապին բանտերու մէջ կամայականութեամբ և ապօրէն կերպով: Սէմալի բէյիս Մանուկ, քեաթիպ Մանուկ, Կիրակոս, Շէնիքի Միքայէլ խաբէութեամբ բռնւեցան, Րէխս Մանուկ և Միքայէլ բանտի մէջ մեռան, միւս երկուքը դեռ կը մնան: Հաւանական է որ երկուքն ալ մեռնեն չարչարանքով բանտի մէջ՝ ինչպէս ուրիշներն ազատւեցին զանազան տանջանքներով: Բանտարկւածներու աներ փչացած են.

Ահաւասիկ մի քանի դէպքեր:

Զղուտի Խարս, ուր թշնամին զոհ տւած էր Կոմիսէր Հիւսնի բէկը, մերոնք յարձակումն կը կրեն Բէգրեան էֆէնդու գազան եղբայր Հասան չավուշի հրամանատարութեամբ եկած կանոնաւոր զօրքէ: Վերջիններու թիւը 27 էր: Մերոնք մինչև իրիկուն կռւելով բոլորն ալ ապահով դուրս կ՚ելնեն: Միայն ճանապարհին՝ մթութեան և անձրևի պատճառաւ՝ մշեցի Նշօն բարձր փուլէ մը վար կիյնայ և կը մեռնի: Մի այլ յարձակման միջոցին մեր տղերք դարձեալ անվնաս դուրս կուգան, սակայն թշնամին կրակի կուտայ գիւղի ամբողջ շինութիւնները:

Մի այլ դէպք. Ալվառինջ՝ մերոնք կը պաշարւին ապօթարան չըացւած. մինչև երեկոյ կը կռւին երկու հազար զինւորներու և շրջակայ քրդերու հետ՝ Հաջը Ֆէրզի առաջնորդութեամբ. մերոնցմէ կը նահատակւին Կմօ Չեթօն, Խասգեղի Մօսօն, Մանիկցի Պօղէն, Թարբաթող, Աւրանցի Մուրադ և Իսրօն, Բերդակցի Մարտօն, Լևոնը, ալվառինջցի Աստուր, իսկ թշնամուց քսան անգամ աւելի:

Արգավանքի մէջ վարդենիսցի Մուրատ, արմէրացի Աբամ եօթն ընկերներով առաւօտէն մինչև երեկոյ կը կռւին.

Ցրօնքէն զօրք կը հանի։ Հայ կռուողներու փամփուշտները կը հանին և գրեթէ բոլորն ալ գաշունահար կը լինին։

Ընդհարման մի այլ դէպք ալ Ալիջան կը պատահի։ Հոն կը մեռնին մերոնցմէ խառնեղցի Միրօն, և արախցի Մոսօն իսկ Քերիմ աղան և իր պաշտպան զօրքերը կ'ազատուին Մէմէտի գոմը։ Ամբողջ գիւղ կը թալանուի, ինչպէս դէպքի բռնուած միւս գիւղեր։

ՆԱՄԱԿ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԷՆ

ՎԱՆ, 13 յունուար 1906

Թուականէս երկու ամիս առաջ՝ շաբաթ օր, Անգղ-Մաշտուկ գիւղի ճամբուն դէպի Արտամէտ տանող „Գէօլի Ձոր“ կոչուած տեղը՝ կը սպաննեն Մաշտուկ գիւղացի Պաղտիկ երիտասարդը (30—35 տարեկան) իր կնոջ հետ և Իշխնիգոմ գիւղացի 60 տարեկան ծեր Մարգարը։ Վերջինս Բերդակ գիւղէն երեք իշաբեռ ցորեն կը փոխադրէ եղեր — վարձով իր ապրուստի համար։ Իսկ Պաղտիկը սպանուած է Արտամէտի մօտ, երբ իր կնոջ հետ քաղաքէն կը վերադառնար, ուր տարած էր իր կինը՝ աչքերու հիւանդութիւնը բժշկի ցոյց տալու։ Շաբաթ ճաշի ատենները Արտամէտի մօտ անոնց երեքին անցնելը տեսնողներ կ'ըլլան։ Կ'անցնի երեք օր, ոչ մի լուր։ Երկուշաբթի յանկարծ Իշխնիգոմի մէջ կ'երևան անոնց էշերը դատարկ, առանց համետի։ Մարգարի տղան իրենց գիւղացի երիտասարդ մը միասին առած իր հայրը փնտռելու կ'ելլէ։ Ճամբան ոչ ոքի չհանդիպելով կը հասնին Արտամէտ, հարց ու փորձով կ'իմանան, որ շաբաթ Պաղտիկի և անոր կնոջ հետ անցեր ու դէպի գիւղ է եկեր։ Մինչ այս մինչ այն գիւղի միւս երիտասարդները փնտռելու կ'երթան և կասկածելով ձորը կ'իջնեն և դիակներու հանդիպելով, առանց ձեռք տալ գիւղ կը դառնան և եղելութիւնը կը պատմեն. իմաց կը տրուի կառավարութեան, բայց կ'անցնին օրեր և հազիւ ութերորդ օրը կուգան քննիչները և բժիշկի բաբօրը ցոյց կուտայ որ Պաղտիկը մերկացուցեր են և յետոյ վերևի հին խշլիկը հագցուցեր, ձեռքն ու ոտքը կապեր և ապա խեղդեր են։ Մարգարը չեն խղդեր, որովհետև ոչինչ ունի եղեր իր մօտ. միայն մահացուցեր են մեծ սալ-քար մը դնելով կուրծքին և ստամոքսին վրայ։ Կուրծքի վանդակը և կողերը ջարդուած են։ Կինը հեռացուած է մարդիկներէն քսան քայլ դէպի բարձր տափարակ տեղ մը, ուրկից մարդիկ չէին կարող տեսնել, յայտնի չէ թէ ինչ նպատակով... և այնտեղ քարով զարկեր են գանկի յետին մասին, ուրկից ուղեղը դուրս է ժայթքեր և երեսի կողմէն ալ զարկեր և կզակը ջարդեր են և ապա նորէն մեծ սալ մը բարձրացուցած են կուրծքին։ Գաղան ոճրագործներու այդ արարքը թալանի՞ թէ վրէժխնդրութեան արդիւնք է... թէ մինը և թէ միւսը։ Բան մը որ շատ քիչ կը պատահի, այն ալ ճանապարհին կին սպանելն է։ Կ'ենթադրուի որ չարագործները ծանօթ մարդիկ եղած են և իրենց ոճրագործութիւնը ծածկելու նպատակով կնկան ալ չեն խնայած։

Քննիչները խրոխտանօք յանդիմաներ են սպանուողին եղբայրը, թէ ի՞նչպէս անմիտ և սառնասիրտ կը գտնուի եղբօրը սպանութեան հանդէպ և ի՞նչու չէ եկած „հիւքիւմէթ արզուհալ“ տալու։ Արդեօք գ՞իտէք թէ ինչ կը հասկցուի այս դարձուածքի տակ, այն որ կարող են մեղադրել եղբայրասպանութեան մէջ։ Այս դժոխքի երկրի մէջ անհաւանական բան չկայ։

Անցեալ տարուան յունիս ամսին նոյն այդ ձորի մէջ 18—20 տարեկան Անգղ գիւղացի երկու երիտասարդներ աւելի անգութ և բարբարոսական մահով սպանուեցան — դաշոյնի անթիւ հարուածներով — զոհ երթալով թշնամութեան և վրէժխնդրութեան։ Եկան քննիչները և սպաննուողներու ազգականներու վրայ արեան բիծ գտան։ Ու ահա ոճրագործները գտնուած են... Անոնք ուրիշներ չեն՝ բայց եթէ իրենց իսկ ազգականները, այսինքն սպանուողներէ մէկու եղբայրը և միւսին հօրեղբայրը, որոնք անմիջապէս բանտարկուեցան իբրև ոճրագործներ։ Բայց ինչ կարող է լինել այս եղբայրասպանութեան և որդեսպանութեան շարժառիթը։ Թրքական քննիչներու ոճրայղած գանկը գտած է նոյն դրդապատճառը — սպաներ են որովհետև կ'ուզէին անոնց բաժին ընկած „մալին“ տէր դառնալ։ Ամբողջ տարի մը խեղճ թշուառները բանտ նստան, գործը գնաց Պոլիս, միակ դրական ապացոյց շալվարը, որի վրայ արեան բծեր նկատած էին, պահանջուեցաւ Պոլսէն։ Ուղարկեցին արդարութեան մեծ ատեանը և քննութիւնը ցոյց տուաւ, որ արեան բիծը մարդկային արեան չէ, այլ կենդանու և Ատեանը անպարտ հռչակեց մեղադրուողները։

„Շալվարի“ տէրը ազատ արձակուեցաւ. իսկ այդ անմեղ զոհերէն միւսին, որ արդէն մեռած էր բանտին մէջ, ինչ ի՛նչ մեղադրանքով 7 տարի „հէօքմ“ եկաւ. իսկ ան արդէն յաւիտեան դատապարտուած էր... մեռած։ Ուրեմն զարմանալի չէ, որ նոյն օյունն ալ այս խեղճերու գլխուն խաղան... Համիտական արդարադատութեան յատկանշական գծերն են ադոնք։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐ

ԴՐՈՒԹԻՒՆԸ ՇՈՒՇՈՒ ԿՈՂՄԵՐՈՒՄ

Շուշի, մարտ 2

Քաղաքի և գաւառի դրութիւնը նոյնն է։ Գեներալ Գօլօշչապօվի տարածած երկիւղը հայերին բաւական սաստ նստեց. գործիչներից շատերը հալածուեցին ու աքսորուեցին և այդ պատճառով հմուտ գործողների պակասութիւն է զգացւում։ Դաշնակցութեան սահմանած դերը և պատասխանատուութիւնը շատ մեծ է։ Ժողովուրդը Դաշնակցութիւնից հրաշքներ է սպասում, նրա վրայ մեծ յոյսեր ունի, իսկ գործիչների պակասութիւնը յաճախ արգելում է կազմակերպութեան՝ իրականացնելու իր ծրագրի այս կամ այն կէտը։ Նենգամիտ կառավարութիւնը հայ ժողովրդին զինաթափ անելուց զատ՝ պատճառ է դառնում ժողովրդին ցաւակից եռանդուն երիտասարդ ոյժերը նրա միջից բռնի դուրս կորզելու։ Առանց ղեկավարների ժողովուրդը վտանգի դէպքում բնականօրէն իր անելիքը որոշել պիտի դժուարանայ։ Իսկ այդ վտանգը գարնան օրերին սև ամպի պէս ծանրացած պիտի լինի մեր ժողովրդի գլխին, երբ թուրք „համակները խմբերով դէպի լեռներ բարձրանալ ուզենան։ Այդ պարագաները ի նկատի ունենալով՝ պատրաստութիւնները պիտի կրկնապատկւին։

„Շախուէի“ օրը թուրքերը վտանգաւոր դիրքերը գրաւեցին՝ կարծելով թէ հայերը յանկարծ կը շրջապատեն իրենց և կը կոտորեն։ Մեր կուրացած հարևանները դեռ չեն հասկացել, թէ հայը ընդունակ չէ առանց յարգելի պատճա-

ուի յարձակուել Թէկուզ իր Թշնամու վրայ, վատօրէն օգտուելով նրա կրօնական արարողութեամբ զբաղուած լինելու յարմարութիւնից։ Կառավարութիւնը խիստ միջոցներով փնտրում է մեր երկու լաւ ոյժերին, որոնք ի հարկէ դիւրութեամբ ձեռք չեն անցնիլ։ Գլխաւոր պաշտօնեաների բռնած ընթացքը մեր շրջանում շատ մութն է և դժուար է վճռական հաւատ ընծայել նրանց կարգադրութիւններին։

Գօլօշչապո՛վը գալով այստեղ՝ սկզբում մի շարք պահանջներ դրեց, սպառնալիքներ կարդաց, անյաւ գաւառները և Թնդանօթի բռնեց Թէ՛ հայկական և Թէ՛ Թուրքական կասկածելի գիւղերը, մի քանի գիւղեր խուզարկութեան ենթարկեց, բայց համարեա ոչինչ չը գտաւ։ Այժմ վերադարձել է Խանքենդի, իր մօտ կանչել քաղաքագլխին և և հարց ու փորձ արել, Թէ արդեօք պատրաստ են կատարել իր դրած պահանջները—որոշ ժամանակում իրեն ներկայացնել խռովարարներին ու զէնքերը։ Քաղաքագլուխը պատասխանել է, Թէ խ ռ ո վ ա ր ա ր ասելով պէտք է հասկանալ բոլոր քաղաքացիները, իսկ գալով զէնքին, նա ասել է. „ենԹադրենք, որ հայերից ու Թուրքերից հաւաքեցինք 100-ական հրացան, դրանով չարիքի առաջը առած չէք լինի։ Թէ հայերը և Թէ Թուրքերը նորից զէնք կը ստանան, Թէկուզ պօստով, ուստի պէտք է աշխատել դրա առաջն առնել և Թոյլ չը տալ որ նոր զէնք մտնի ժողովրդի մէջ“։ Գօլօշչապօվը իբր Թէ հաշտուել է այդ մտքի հետ և հեռացել այնտեղից առանց իր պահանջների վրայ պնդելու. միայն աւելացրել է, Թէ ինքը գնալու է Թիֆլիս փոխարքային զեկուցում տալու և եԹէ լսէ Թէ Շուշում որևէ նոր դէպք է պատահել, իսկոյն կը վերադառնայ զօրքով և կ՚իրագործէ այն ծրագիրը, որի համար եկած է եղել—այն է Գուբրիայի վիճակին հասցնել Շուշու գաւառը։ Ահա մի կառավարութիւն, որ պարծենում է իր կատարած աւերմունքներով։ Շուշու մէջ կատարուած տեռորների պատճառով Գօլօշչապովի խիստ պահանջը—գտնել ահաբեկիչներին, մնաց առանց հետևանքի։ Երէկ լուր տարածուեցաւ, Թէ Սիւնիքի Ալիանլու Թուրքական գիւղում կօզակների և Թուրքերի միջև կռիւ է տեղի ունեցել, ուր սպանուած են երկու կօզակ։ Երէկ մի հարիւրակ զինւոր ուղարկուեց դէպքի վայրը. մանրամասնութիւնները յայտնի չեն։

Հաստատ աղբիւրից լուր ստացուեց, Թէ Պարսկաստանից, փայտակարանի վրայով, 20 բեռ ռազմամԹերք են անցկացնում Շուշի Թուրքերի համար։ Այդ մասին իսկոյն իմաց տրուեցաւ Դիզակի Դաշնակցական զինուորական խմբին՝ առաջը կտրել և խլել այդ զէնքերը—ռազմամԹերքը։

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Փետրուար 14

Կովկասեան լրագիրները արդէն հաղորդեցին ընդհանրապէս Զանգեզուրի և մասնաւորապէս Ղափան մհալում կատարուած արիւնհեղութիւնների մասին։ Պէտք է նկատել սակայն, որ մի քանի թղթակցութիւններ իրերի իսկութեանը չեն համապատասխանում։ Հաղորդուած էր, օրինակ, որ Շահսուվար բէկը կոտորել է Անդեղակոթ գիւղում 200 երեխաներ և կանայք, մինչդեռ սպանուած է այդ գիւղում միայն մի կին։ Սխալ էր և այն հեռագիրը, որ տուած էր Ղափանի գիւղերի մասին։ Ընդհանրապէս Զանգեզուրում հայերը մեծ աջողութիւն են ունեցել։ Եւ այս կողմի Թուրք ժողովուրդը բոլորովին ցանկութիւն չունի ընդհարուելու։ Թուրք մասսան ահարեկ վիճակի մէջ է։

Ղափանում Մողէս գիւղն է աւերուել։ Բնակիչները ապաստանել են Արծուանիկ գիւղում։ Ցուել են միայն չորս վիրաւոր Արծուանիկից։ Վիրաւորները առողջանալու վրայ են։ Նիւթական կորուստը մեծ է։ Միայն չորս տուն է կարողացել ազատել իր ունեցածը, իսկ մնացած տները կորցրել են համարեա ամբողջ տնտեսութիւնը։ Բարեբախտաբար կարողացել են ազատել հացը, որ հորերում է եղել։ Եղավարդի և Զէյվի կռիւը ահռելի կերպարանք ունէր։ Նոյնիսկ Թուրքերի տուած տեղեկութեան համաձայն նրանցից 200 չափ սպանուածներ կան։ Այդ կռւում հայերը մի քանի վիրաւոր միայն ունեցան։ Նախաձեռնողը եղել է Իլդըրմ բէգը։ Հայ տղաների և Դաշնակցութեան զինուորների հերոսութիւնները անգնահատելի են։ Ցարաբախտաբար դեռ չը բանկուած մասերում տիրում է անվստահութիւն և գիւղից գիւղ յարաբերութիւնը դժուարացել է։

Ահաւոր դրութիւն է ստացւում դարնանը, երբ Թուրքերը պէտք է սար բարձրանան. այժմեանից Ղափանի հորիզոնը գնալով մԹագնում, դառնում է մռայլ։ Այդ կողմերում էլ ոչ ոք չէ հաւատում խաղաղութեան և հաշտութեան անմիտ կատակերգութիւններին։ Մեր բոլոր ականջներն անգամ յոգնել են այդ խօսքերը լսելուց։ Հայ գիւղացիները դիմել են ներգործական միջոցների։ ԵԹէ Գօլօշչապովի ռմբակոծման լուրը չը լինէր, այս կողմերում Թուրք գիւղերի պատիժը կատարեալ կը լինէր։ Գօլօշչապօվի օգնականը անցել է Սիսիան և այսօր լուր եկաւ, որ հասել է Արծուանիկ։ Սիսիանում ռմբակոծել է Բռնակոթ և Անգեղակոթ հայ գիւղերը, իսկ Թուրքերի գիւղերից Շաքին, Աղուտի, Վաղուդի։ Լսեցինք, որ ռմբակոծել է Արծուանիկի մօտ գտնուող Թուրք Զարգախլու գիւղը։ Ասում են, որ Իլդըրմ բէկը փախել է։ Ինչպէս յայտնի է, Զէյվի, Եղավարդի վրայ յարձակւողները եղել են՝ Բուրգուշադի Թուրքերը. տեսնենք այդ գիւղերից քանիսն են ռմբակոծելու։

ԵԹէ կառավարութիւնը չէզոք դիրք բռնէր, Թուրք բէկերը կը տեսնէին Թէ հայերը ինչ հերոսութիւններ են ցոյց տալիս։ Նախկին՝ ոչխարային խոնարհութեան վարժ ժողովուրդը այժմ առիւծ է կտրել։ Բոլորը կռիւ են կանչում, բայց, իհարկէ, ղեկավար ոյժերը աշխատում են զսպել, որովհետև ժողովուրդը հիւծուել, քամուել է նիւթապէս և տնտեսապէս։

Փետրուար 26

Թուրք բէկերը իրենց կրած անյաջողութիւններից յետոյ՝ բարբաջանքների մէջ են ընկել և եռանդուն պատրաստւում են՝ նորանոր արշաւանքներ գործելու ամբողջ Ղափանի և Գիւնէյուղի վրայ։ Ամեն օր սպառնական լուրեր են գալիս։ Զանգիլան գիւղում Թուրք բէկերի մօտ եղել է բազմամարդ ժողով՝ մասնակցութեամբ Պարսկաստանից եկած խաների։ Կենտրոնացնում են մեծ ուժեր։ Տեղեկութիւն կայ, որ մըտադիր են յարձակում գործել Մեղրիի բաժնի վրայ՝ Շվանիձորի, Կարճիանի և Լիճկի կողմից, իսկ Ղափանի վրայ՝ Խոտանանի, Զէյվի, Եղավարդի, Շիխաւղի կողմերից։ Թուրք բէկերը գիւղերն ընկած՝ ամենախիստ միջոցներով ստիպում են Թուրք ժողովրդին զէնք ձեռք բերել։ Մէկ հարուստ Թուրքից վերցրել են 200 րուբլի և ուղարկել Պարսկաստան՝ ռազմամԹերքի համար։ Ղարադօլ գիւղի Վալի բէկ Զավանշիրը իր մարդիկը ուղարկել է Գարգիլու Թուրք գիւղը փող ժողովելու՝ զէնքի համար, բայց գիւղի մոլլան և ժողովուրդը դիմադրում են բէկերի մարդկանց։ Ծագում է կռիւ. վիրաւորուել են մի քանիսը։ Զինուելու և յարձակուելու դէմ է եղել Օխտար Թուրք գիւղի մոլլան։ Թուրքերի ջ ա ն ր է գ ա ր ն ե ր ը մոլլի մօտ են գնում համոզելու, բայց անյաջող։

Թուրք բէկերի ծրագրները խորտակելու համար՝ հայերը լրջօրէն պատրաստւում են։ Մի քանի օր առաջ Դաշնակցութեան երկու խմբերը անցան դէպի վտանգի վայրերը։ Գօրիսի շրջանից նոյնպէս եկել են զինուորներ։ Շուտով պէտք է գայ ընկեր Մ... ստանձնելու ընդհանուր ղեկավարի պաշտօն։ ԵԹէ մօտ ժամանակներս ընդհարումներ չը լինին, անկասկած գեղածիծաղ գարունը բացուելու է սև, մռայլ և դժնդակ օրերով։ Լուր կայ, որ Թուրքերը իրենց ամենավերջին ճիգերը գործադրելու են, սակայն ապարդիւն և անօգուտ ճիգեր։ Հայերը պատրաստ են։

Գօլօշչապօվի օգնական գնդապետ Վէները ռմբակոծել է մի քանի տուն Զարգախլու գիւղից։ Այսօր Գօրիսից եկած լուրերը հաստատում են, որ գնդապետը իսպառ այրել է Թուրք Ալիանլու (կանոնաւոր աւազակաբոյն է) Մազմազակ և այլ գիւղերը։ Գիւղը մտնելիս՝ Թուրքերը դիմադրել են գնդապետին և այդ պատճառով նա ռմբակոծել է գիւղը, կօզակները կոտորել են բաւական Թուրքեր. մօտ 20 հոգի էլ ձերբակալուած՝ ուղարկուել են Գօրիսի բանտը։

Թուրքերը ապանել են Շվանիձորեցի երեք անչափահաս պատանիների։ Ուրջանիս գիւղի մարաքները կրկին պրել են և կտրտել վեց Ջրաղացներ։ Օնչի տանող ճանապարհին Զէյվի ամրոցների մոտ կրկին թալանել են մի քանի հայերի։ Դաւառապետից խիստ կարգադրութիւններ կայ պրիստաւի վրայ, հայերից և թուրքերից սատրադրութիւն առնելու, որպէսզի յանցաւոր կողմը յանցաւորներին յանձնի կառավարութեան ձեռքը, հակառակ դէպքում գրաւելու են նրանց անշարժ կայքերը։

Կօշակների խմբերը քչացրին և այժմ մի հարիւրակ միայն մնում է Արծուանիկ գիւղում։ Հայ կուսակներից մի քանիսը՝ որոնց վէրքերը շատ վտանգաւոր և անյուսալի էին, այժմ առողջանում են և շուտով կրկին զէնքը ձեռք կառնեն պաշտպանելու ժողովրդին։

Մեր ժողովրդին խորին վիշտ պատճառեց հերոս Սաեփանեանցի և 24 կարիճների մահը։ Երևի „Դրօշակում՝ լոյս կը տեսնին նրա լուսանկարը և կենսագրութիւնը. չը մոռանաք բաժին հանել և մեր կողմի գիւղացիներին, որոնք երկար, շատ երկար չը պիտի մոռանան յեղափոխական մարտիկի անունն ու գործը...

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

I

Վերջապէս քաղաքական կեանքը բորբոքուեց Ռուսաստանում ևս։ Հորտական և բռնաւոր Ռուսաստանը պատմութեան գիրկն է անցնում... Մեր աչքերի առջև կատարւում է բաղմատանջ, բայց մեծ երկրի վերածնութիւնը դէպի նոր, ազատ կեանք։ Թանկ գնով է գնած քաղաքական ինքնորոշման այդ իրաւունքը, համապասխան պատմականօրէն կազմակերպուած իդէալների ոգուն, ծանր փորձանքների, բազմաթիւ զոհերի, աւիւն-արցունքների և հերոսական ջանքերի գնով։

Անցեալ 1905 տարին մի ամբողջական ողբերգութիւն է տարիների ամբողջ շրջանում, գրօշմուած վեհ ձգտումների կնիքով, ազատուելու դարաւոր ստրկութեան շղթաներից ու կապանքներից, ստրկութիւն տնտեսական, քաղաքական, մտաւոր, բարոյական։ Եւ ո՞վ գիտէ, թերևս սա դեռ սկիզբն է աւելի վեհասքանչ և անխուսափելի մի ողբերգութեան, որի վերջին, վախճանական գործողութիւնը կոչուած պիտի լինի հանրամարդկային բարձր կուլտուրայի լայն ճանապարհի վրայ դնելու Ռուսաստանը։ Ո՞վ գիտէ, ինչ բարդութիւնների և անակնկալների կը հասցնի մեզ վաղուան օրը, որը պիտի լինի պայքարի օր՝ լոյսի և խաւարի, ազատութեան ու բռնութեան, մարդկայնութեան և բարբարոսութեան, անձնիւրութեան ու էգոիզմի...

Հասարակական մթնոլորտը ելէքտրականացել է։ Բողքի և քինախնդրութեան զգացումը դէպի թագաւորող վայրենի կամայականութիւնները, ինչպէս և յեղափոխական էնէրգիաները աճում են հսկայական չափերով ոչ միայն հասարակութեան գիտակից տարրերի, այլ և մասսաների մէջ, և այն ոչ թէ օրէցօր, այլ՝ ժամ առ ժամ։ Մարդիկ կարողանում են մի ամսւայ ընթացքում մտածել և զգալ այնքան, որքան մի այլ նորմալ—սովորական պայմաններում՝ ամբողջ տարիներ կը պահանջէին։ Բայց չէ նիրհում և թշնամին։ Նա կրծել սկսեց իր սանձը, նա գոռում, մռնչում է։ Նա անզօր է՝ իր անմիտ փորձերի մէջ՝ պահպանելու, ինչ գնով էլ լինի, իր յաղթահարուած դիրքերը, և մոլեգնութեան է հասնում իր սարսափների, ցինիզմի և լպիրշութեան մէջ։ Անգործ չէ և այսպէս կոչուած „խաղաղ բնակիչը“, այդ մէշչանը՝ հոգով, ստրուկն ու սպասաւորը՝ կոչումով, այդ բնածին երկրպագուն „կարգապահութեան“ և „խաղաղութեան“, իդէօլոգը անգորը, որոճող էակի, այդ կուշտ ու սառնարիւն, ոչ-խելօք և ոչ-յիմար, անհամարձակ և երկչոտ ներկայացուցիչը „միջին դրութեան“։ Ամեն ինչ ալեկոծուած է։ Ամեն ինչ ձգտում է դէպի միութիւն—որովհետև միութիւնը այժ է,—ամեն ինչ ձգտում է ձուլուել իր համանմանների հետ, ամեն ինչ ջանք է գործ դնում կազմակերպուելու, պահպանելու իր դասակարգային, կաստայական, համքարային և խմբական շահերը։

Սկզբում Ռուսաստանում գոյութիւն ունէին միմիայն ուղղութիւններ. այժմ սկսեցին ծնուել, աճել և ամրանալ կուսակցութիւններ։ Հասարակութիւնը բազմազանւում է (դիֆերենսիասիօն)։ Մասնաւոր շահերը գումարւում են զանազան քաղաքական և սոցիալական նշանաբանների տակ. իւրաքանչիւր մարդ, որ կատարելապէս անհոգ չէ դէպի իր շուրջը կատարւող դէպքերը, իր պարտքն է համարում պարզել, թէ ի՞նչ է ինքը և ինչի՞ կողմնակից։ Այսպիսի պայմանների մէջ բնական ցանկութիւն է՝ խելամուտ լինել և ծանօթանալ այն կուսակցութիւների հասարակական նշանաբաններին և քաղաքական ծրագրներին, որոնք ներկայումս ակտիվ դեր են կատարում ռուսական կեանքի մէջ։ Իսկ այնպիսի մի յեղափոխական կազմակերպութեան համար, որպիսին Դաշնակցութիւնն է, այդ աւելի քան բնական է, այդ նոյն իսկ անհրաժեշտ է։ Հարկաւոր է իմանալ, — ո՞վ է բարեկամ և ով թշնամի, ո՞վ է մեզ մօտիկ հոգով, ձգտումներով, ո՞ւմ հետ առաջ ընթանանք ձեռք ձեռքի տուած և կամ որո՞նց ծառայութիւններից, երկդիմի հաճոյակատարութիւններից ու պնդերես ձանձրացումից թափ տանք մեր օձիքն, առանց երկար տատանելու...

Այդ կարելի է իրագործել հէնց այժմ, քանի որ ռուսական գլխաւոր կուսակցութիւնները որոշ չափով զտուել են և նրանց ծրագրի ու տակտիկայի հիմնական կէտերը պարզուել։ Հասկանալի է, որ այնպիսի մի անցողական մոմենտում, որպիսին այժմս է, երբ քաղաքական և հասարակական credo-ների բիւրեղացման պրոցեսը դեռ հեռու է վերջացած լինելուց—և չի էլ կարող վերջացած լինել—պէտք է գոյութիւն ունենայ մանր համախմբումների մի ամբողջ շարան, „կուսակցութիւններ“ անունով։ Բայց ո՛չ նւազ հասկանալի է և այն, որ այս տեսակ „կուսակցութիւնները“ ժամանակով կամ պէտք է անհետանան քաղաքական գործունէութեան ասպարէզից և կամ պէտք է լուծուեն ուրիշ, աւելի կենսունակ կուսակցութիւնների մէջ։ Ահա թէ ինչու մենք բոլորովին աւելորդ ենք համարում կանգ առնել այդ օրինակ մեռելածին քաղաքական խմբերի ընդհանուր ֆիզիոնոմիայի պարզաբանութեան վերայ,—նրանք ոչ այլ ինչ են, եթէ ոչ անկայուն փրփուր՝ ալեկոծուած ծովի մակերևոյթի վրայ...

Արդ, ո՞ր կուսակցութիւնն են արժանի այդ անուն, և կամ որոնք են, որ իրաւունք ունեն պահանջելու առաջնորդի դեր՝ ռուսաց կեանքի մօտակայ դէպքերում։ Ճիշտն ասած՝ դրանք ընդամենը երեք են,—

1. Յեղափոխական-Սոցիալիստական, 2. Սահմանադիր-ռամկավարներ կամ ժողովրդական ազատութեան կուսակցութիւն և 3. Սահմանադրական-միապետական, որի կազմի մէջ մտնում են՝ „Հոկտեմբեր 17-ի միութիւնը“ և „Արդիւնա-առևտրական կուսակցութիւնը...

Pur sang միապետականների մասին, կամ ինչպէս նրանք են յօրջորջում, „ինքնակալ միապետականների“ մասին առ այժմ լրջօրէն խօսելու տեղիք չ'կայ։ Կեանքը հաւաածում է նրանց անողորմ կերպով—և իբրև ապացոյց դրան՝ այն պարտութիւնը, որին ենթարկուեցին նրանք „դումայի“ ընտրութիւններին։ Թերևս ժամանակով, կեանքի աւելի հաւասարակշիռ մթնոլորտում՝ նրանք ոգի կ'առնեն, բայց առայժմ, կրկնում ենք, նրանք ստիպուած են բլոկ կազմել „արդիւնա-առևտրականների“ և „Հոկտեմբերականների“ հետ, որոնց մի մասը թերևս մօտ ապագայում իրենց կողմը քաշեն։

„Սահմանադիր-ռամկավարները“ կամ, ինչպէս ընդունուած է ասել „կադէտները“ բաժանւում են աջակողմեանների և ձախակողմեանների։ Վերջիններս իրենց մի քանի հայեցակէտերով յարում են սոցիալիստներին, որոնք, ինչպէս յայտնի է, կազմում են երկու կուսակցութիւն՝—„սոցիալ-դէմօկրատների“ և „սոցիալիստ-յեղափոխականների“ կուսակցութիւն։ Մենք կը սկսենք վերջինից, նախ այն պատճառով, որ Դաշնակցականները իրենց ծրագրով և տակտիկայով աւելի մօտ են կանգնած „սոցիալիստ-յեղափոխականներին“, և երկրորդ, որովհետև կան և ուրիշ յատուկ պատճառներ։ Հէնց այս բոպէիս մեր առջև դրած է „սոցիալիստ-յեղափոխականների“ հրատարակած „Դանուցումն կուսակցական համաժողովի“, որը կայացաւ Մոսկուայի պատմական օրերից անմիջապէս յետոյ և որի ընթացքում կուսակցութիւնը մշակեց իր վերջնական ծրագիրը—մի բոլորովին բարեպատեհ հանգամանք, որ միջոց է տալիս ճշտիւ ծանօթանալու այդ կուսակցութեան կուսի եղանակների, մերձաւոր խնդիրների և վերջնական նպատակի հետ։

*

Իրաքանչիւր գիտակից քաղաքական կուսակցութիւն իր ծրագրի և տակտիկայի մէջ՝ իբրև հիմք ընդունում է հասարակական-փիլիսոփայական որոշ աշխարհայեացք, ուր արտայայտւում են նրա տեսակէտները պատմական պրոցեսի էութեան և ֆակտորների վերաբերմամբ, նրա հասարակական իդէալները, նրա վերաբերմունքը դէպի ընթացիկ մօմենտը և դէպի այն հասարակական բեել ոյժերը, որոնց ներկայութեամբ և աջակցութեամբ, կուսակցութիւնը ձգտում է զարգացնել և լայնացնել իր գործունէութիւնը և իրագործել իր մօտաւոր ծրագիրները։ Ինքն ըստ ինքեան պարզ է, որ սոցիալիստ-յեղափոխականները ոչ միայն ունին այդպիսի աշխարհայեաց, այլ և դա կազմում է կուսակցութեան ծրագրի կենդանի շունչն ու հոգին։

Փորձենք համառօտակի ուրուագծել այդ աշխարհայեացքը։

„Մարդկութեան սոցիալական պրոգրեսը, որը արտայայտւում է հասարակական փոխադարձ համերաշխութեան և մարդկային անձնաւորութեան բազմակողմանի և ներդաշնակ զարգացման պայքարի մէջ, ենթադրում է ոչ միայն դիմադրուող դասակարգերի հակամարտման (անտագոնիզմի) զարգացումը, այլև գիտակցող մարտիկների միջամտութիւնը՝ յանուն ճշմարտութեան և արդարութեան“։

Այս խօսքերի մէջ, որը մենք առաջ ենք բերում սոցիալիստ-յեղափոխականների կուսակցական ծրագրի յառաջաբանից, արտայայտուած են նրանց, այսինքն՝ սոց.-յեղափոխականների հասարակական-փիլիսոփայական *credo*-ի հիմնական գծերը. այստեղ մատնանիշ են արուած թէ՛ այն նպատակները, որոնց համար սոց.-յեղափոխականները պարզեցին իրենց ռազմական դրօշակը, և թէ՛ այն իրական՝ պատմութեան կողմից առաջադրած ոյժերը, որոնց օգնութեամբ „ուտոպիան“ պիտի դառնայ իրական փաստ։

Դէպի ո՞ւր է տանում, կամ ո՞ւր պիտի տանի հասարակական պրոգրեսը,—հարցնում են սոց.-յեղափոխականները և առանց մի բոպէ անգամ վարանելու, իրենց ճշտախոհութեան լիակատար գիտակցութեամբ, համաձայն խոհականութեան և խղճի, պատասխանում են՝ „Դէպի հասարակական փոխադարձ համերաշխութեան հաստատումն և դէպի անձնաւորութեան բազմակողմանի և ներդաշնակ զարգացումն“։ Նրանք—սոցիալիստներ են, բայց անհատականութեան որոշ արտայայտուած խառնուածքով։

Ցնտեսական և հասարակական կեանքի ապագայ ձեւերը—սոցիալիզմը՝ զբաղեցնում է նրանց միտքը այնքան, որքան նա ընդունակ է ստեղծել՝ ըստ կարելոյն շատ՝ բարեպատեհ պայմաններ անձի ազատ զարգացման համար։ Հէնց այդ իսկ պատճառով, „սոցիալական փոխադարձ համերաշխութեան հաստատումը“ նրանք համարում են իբրև անհրաժեշտ հիմք՝ անձաւորութեան նիւթական և մտաւոր զարգացման համար։ Համաձայն այդ նպատակների, սոց.-յեղափոխականների գործունէութիւնը պիտի ընթանայ երկու ուղղութեամբ,—կեանքի հին կարգերի կործանումով և նոր ձևեր ստեղծելով։ Արդիւնաբերական գործիքների մասնաւոր սեփականութեան, դասակարգային կազմակերպութիւնների, քաղաքական և հասարակական հիմնարկութիւնների ստիպողական բնոյթի ոչնչացումն,—դա մի կողմն է միայն նրանց երկրորակ ծրագրի։ Իսկ արդիւնաբերական միջոցների համայնացումը, ընդհանուր աշխատանքի համաչափ կազմակերպութիւնը յօգուտ ընդհանուրի, և այդ կազմակերպութեանը համապատասխանող քաղաքական ձևեր—ահա այդ ծրագրի միւս կողմը։

„Միմիայն այդ ծրագրի իրականացումը, ասում են նրանք, կը փոխի հասարակաց հարստութեան աճումը և բանւոր դասակարգի (այսինքն՝ քաղաքային պրոլետարիատի և աշխատաւոր գիւղացիութեան) ճնշման, ստրկութեան աղբիւրը կը վերածէ բարեկեցութեան և ազատութեան աղբիւրի. միմիայն նա կը տայ կարելիութիւն մարդկութեան նիւթական և մտաւոր ուժերի անընդհատ զարգացման, վերջ տալով նրա մի քանի խաւերի այլասերման, որ արդիւնք է պարապութեան և կուշտ կեանքի, ազատելով միւսներին ֆիզիքական անչափ և բիրտ աշխատանքից ու տարրական պիտոյքների անբաւարարութիւնից։ Միմիայն նա կ'ապահովէ, մարդկային անհատականութեան բազմակողմանի և ներդաշնակ զար-

գացումը՝ սօցիալական փոխադարձ համերաշխութեան հողի վրայ“ (*ibid*)։

Եւ այսպիսի լայն խնդիրներ դնելով իր առաջ, սօցիալիստ-յեղափոխականների կուսակցութիւնը, աչքաթող չէ անում այն դժուարութիւնները, որոնք կապուած են նրանց իրականացման հետ. Նա երբէք չէ երազում, որ իր իդէալները անյապաղ կը կերպարանափոխուեն և կը դառնան կենդանի իրականութիւն. չէ երազում մի երևակայական թռիչք „անհրաժեշտութեան թագաւորութիւնից“ դէպի „ազատութեան թագաւորութիւնը“. Նա գիտէ, որ ազատութեան ճանապարհին գտնւում են մի շարք կայաններ (էտապներ), որոնցից ռուս հասարակութիւնը ու ժողովուրդը խուսափել չէ՛ կարող, պատմական անհրաժեշտութիւնից բղխած հանգամանքների շնորհիւ։ Նա պնդում է, որ աշխատող մասսաները պէտք է մի շարք, թէև խոշոր բայց և այնպէս մասնակի, տիրապետումներ անեն՝ նախ քան նրանց կ՚աջողւի իրականացնել իրենց վերջնական նպատակը։ Այդպիսով, չը հրաժարուելով հանգերձ, այսպէս կոչուած՝ իրական քաղաքականութիւնից, չը հրաժարուելով աշխատաւոր մասսաների օրւայ չարիքը կազմող այս կամ այն կռւից, սօցիալիստ յեղափոխականների կուսակցութիւնը իր պարտքն է համարում „ձգտել՝ որպէսզի մասնակի տիրապետումների քաղաքականութիւնը խոչընդոտ չը հանդիսանայ բանւոր դասակարգին՝ հասնելու իր վերջնական-հիմնական նպատակին, որպէսզի իր յեղափոխական կռւի միջոցով նա ձեռք բերէ գէթ այնպիսի փոփոխութիւններ, որոնք կարող կը լինեն զարգացնել նրա խըտացումը և ընդունակութիւնը դէպի ազատագրական կռիւը, նպաստելով նրա մտաւոր ու կուլտուրական կարիքների մակերևոյթի բարձրացման, ամրացնելով այսպիսով նրա ռազմական դիրքերը ու հեռացնելով այն արգելքները, որոնք կը գտնւին նրա կազմակերպական ճանապարհների վրայ“ (*ibid*)։ Ուրիշ խօսքով՝ վաղւան կամ մերձաւոր ապագայի կռիւը պարտաւորական կերպով պէտք է առաջ մղւի այն գաղափարների դրօշակի տակ, որոնց լոյսը գալիս է աւելի հեռաւոր ապագայից։ Սօցիալիստը ոչ մի րոպէ չ՚պէտք է մոռանայ, թէ որն է հիմնական խնդիրը, իսկ այդ կարելի է միմիայն հասարակական իրական ուժերի, և յեղափոխական եռանդի կիրառութեան որոշակի համաձայնութեամբ, և անյողդողդ ձգտումով՝ նպատակայարմար կերպով օգտւելու ներկայից, յօգուտ սօցիալիզմի իրականացման...

Բայց ո՞ւր են այն ուժերը, որոնք ուղղում են դէպքերը դէպի սօցիալիստական իդէալներ, անձնաւորութեան բազմակողմանի, ներդաշնակ զարգացման ճանապարհով, փոխադարձ համերաշխութեան հողի վրայ։ Այս կէտում ևս սօցիալիստ-յեղափոխականները տալիս են որոշ պատասխան։ Նրանք, ի հարկէ, ընդունում են մարքսիստական վարդապետութեան այն մասը, որը խօսում է ժամանակակից հասարակութեան դասակարգային բնաւորութեան, դասակարգային շահերի ներհակութեան ու կռիւների, կապիտալիստիկական տնտեսութեան յատուկ ինքնաժխտման տենդենցիաների մասին, որովհետև—դա գիտական սօցիալիզմի գնահատելի և առողջ միջուկն է։ Սակայն այդ դեռ բոլորը չէ. Նրանց կարծիքով մի շարք Փակտօրների մէջ, որոնք պայմանաւորում են պատմական դէպքերի զարգացումը, շատ կարևոր նշանակութիւն ունին և գաղափար-ոյժերը։ Նրանց ստեղծագործիչ, իրական դերը՝ տնտեսական, հասարակական և քաղաքական ձևերի կործանման և վերակազմութեան գործում՝ ոչ մի կասկածի ենթարկել չէ կարող։ „Սօցիալական պրօգրեսը, ասում են սօցիալիստ յեղափոխականները, ենթադրում է ոչ միայն գիմագուրկ դասակարգային անտագօնիզմների զարգացումը, այլ և գիտակից մարտիկների միջամտութիւնը՝ յանուն ճշմարտութեան և արդարութեան“ (*ibi.*)։

Գիտակից, „քննադատօրէն մտածող“ անձնաւորութիւնը չէ հեռացւում այսպիսով հասարակական գործունէութեան ասպարէզից. Նա չէ զոհւում „կաղմակերպուած մասսաներին“, այդ „գիմագուրկ դասակարգային անտագօնիզմների արտայայտողներին“, այլ կատարելապէս որոշ և շատ յարգելի տեղ է բռնում պատմութիւնը կազմող ուժերի շարքում։ Ուրեմն, թող քաղաքային պրօլետարիատը և աշխատաւոր գիւղացիութիւնը կազմեն ազատագրական բանակի գլխաւոր զօրամարմինը (կօրպուս)։ Բայց չէ՞ որ ուժ է ներկայացնում և ո՛չ-դասակարգային, յեղափոխական ինտելիգենցիան, այն էլ հզօր, դրդող, լուսամիտ ուժ։

Ահա դրանք են այն նախահիմունքները, որոնց վրայ յենւած է սօցիալիստ-յեղափոխականների ծրագիրը։ Դրա մասին՝ հետևեալ անգամ։

Վ. ԱՐԱՐԱՏՑԻ

ԹԵՐԹՕՆ

ԿԵՆԴԱՆԻ ԹԱՂՒԱԾՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

(Թիւրքական բանտեր)

I

Երկիր-բանտանոց. Օրէնք—Նիզամ. Ոճիրներ օրէնքի անունով. Դրամագուրկ յանցաւորները. Դէպի բանտերը. Ընդհանուր ակնարկ. Թիւրք բանտերի կազմը. Կալանաւորների կեանքը. Կալանաւոր վաշխառուներ. Նասրդ-օյունու. Էսրար. Բարոյական դժոխք։

—

Այն երկիրը, որ հռչակուած է բռնակալական եղակի հոլածանքներով, ուր մարդու միտքը քարացած է իր վրայ զործ դնւող բռնութիւնների հանդէպ, ուր խաղաղ, նահապետական տարրի գոյքը, պատիւն ու անձը ոտնահարւում է անպատիժ կերպով ամէն մի քայլում, ուր մի խօսքով կատարւում են աշխարհիս և ոչ մի անկիւնում չը տեսնուած ու չը լսուած ոճիրներ, այնտեղ—այդ դժբախտ երկրում, դժւար չէ պատկերացնել, թէ ինչ անկման և ինչ ստորացման ենթարկուած պիտի լինի բանտարկեալը, որ օրէնքով զրկուած է ամէն տեսակ իրաւունքից և ենթակայ այս կամ այն պաշտօնեայի ու տարիկանի քմահաճոյքին կամ նրա բերանից արտասանուած նիզամին։

Նիզամ—ահա այն մոգական խօսքը, որ ոչ մի երկրում այնչափ չէ արտասանուած և այնքան չէ շահագործուած, ինչպէս Թիւրքիայում. մի բառ, որ աջ և ձախ կրկնւում է ամէն ոք, յետին զափթիէից սկսած մինչև սուլթանը՝ այդ անօրէն երկրում։ Միայն աւազակներն են, որ առանց „նիզամ“ բառը գործ դնելու, յցւում են ամէն տեղ իրենց թշուառ զոհերի դէմ՝ նրանց ջանը կամ մալը առնելու։ Նիզամի անունով են խօսում և՛ վէրկի մէմուրը և՛ թահսիլդարը, որոնք ասհ-

մանուածի փոխարէն ուզածի չափ են սուրբ վերցնում. Նիզամի անունով են խօսում և բէժիի ղօլջին և գէօմրիւկչին, որոնք ծխախոտ ու այլ արգելուած ապրանքներ փնտրելու պատրուակով թալանում են ճանապարհորդին. Նիզամի անունով են խօսում և զափթիէն և համիդէական քաղաքներում ու գիւղերում, ղահֆէ փարասի՝ ստանալու, որպէսզի արգելք չը լինին շուկայի ազատական գործերը կարգադրելու. Նիզամի անունով են խօսում և իւզբաշին և բինբաշին՝ մէջիդիէները ծրնկալիս՝ ոճրագործին անմեղ յայտարարելու խնդրում. Նիզամի անունով են խօսում և փօլիսն ու կօմիսէրը, և մուստանդիկն ու քեաթիպը և մուավինն ու մահքէմէ րէիզը՝ դրամի գնով վկաների ցուցմունքները բարեփոխելու ու մարդասպանին, գողին աւազակին անպարտ արձակելու համար. Նիզամի անունով են խօսում և փաշաները—լինին դրանք գայմագամ, միւթէսարիֆ թէ վալի, երբ կարմիր ոսկիների քանակից շլացած՝ «բույրուլթու» են տալիս այս ու այն բէյին կամ աղէին՝ ամբողջ գիւղեր ու աւաններ շրջելու միւլթէզիմ անուան տակ և չարքաշ աշխատաւորի արդիւնաբերութիւնը հալալ եղբօր պէս կէս անելու, շատ անգամ նրա պատւի, նրա կնոջ վերաբերմամբ օրթագ ներկայանալու և այդ քէյֆի ու զէվկի մէջ իր հովանաւոր փաշայի կենացը կոնծելու. Նիզամի անունով է խօսում, վերջապէս, և Եըլդըզի բռնաւորը, որ իր մանկլաւիկների ու հարճերի սիրոյ համար՝ պալատի բակերում ու պարտէզներում ամիսներով սպասող այս ու այն թէմէննահջիներին մի-մի «ֆերմանը շահանէ» տալով՝ ուղարկում է երկրի զանազան կողմերը, վալիի բարձրագոյն պաշտօնով՝ որպէս Նիզամի ներկայացուցիչներ...

Նոյն այդ Նիզամն է, որով զինուած յիշեալ բոլոր պաշտօնեաները, իրենց անպարտ արձակած ոճրագործների փոխարէն, ժողովում են «այլ և այլ» յանցանքներով մեղադրուած անպաշտպան անհատներին, որոնցից եթէ մէկին իր ոճիրի, անպատճառ մի քանիսին էլ դրամ չ'ունենալու յանցանքով դատապարտելով՝ ուղարկում են ներս, դէպի մութը, անորոշը, դէպի բանտ՝ քաւել տալու նրանց դրամ չ'ունենալու մեղքը:

Եւ գալիս են անվերջ՝ բոբիկ, տկլոր, սոված, կեղտի մէջ կորած այդ մոռացուածները՝ ոստիկանների հսկողութեամբ, և շղթաների ծանրութեան տակ ջախջախուած՝ ներս նետւում: Դրսի համատարած «ազատ բանտից» գալիս են իսկական բանտ, մեծ բանտից պոկուած՝ երկաթէ նեղ դռնով անցնում են դէպի փոքր բանտը—ո՞վ գիտէ, ո՞րչափ ժամանակով: Դրսի պատկերը կամաց-կամաց աղօտանում, նսեմանում, մի երազ, մի վաղանց անուրջ է դառնում, իսկ իրականութիւնը չորս պատերի մէջ պարփակուած մի փոքրիկ տարածութիւն՝ լի մարդկային ժխորով—իր դաժան, ձանձրալի հոտ ու մուշով:

—

Թիւրքիայի բոլոր քաղաքներում, համարեա առանց բացառութեան, բանտերը գտնւում են կառավարչական հիմնարկութեան (սէրայ) տակը և կամ նրա բակի մէջ: Այդ տարօրինակ երևոյթը աչքի է ընկնում ամէն մի օտարականի, որ սովորել է տեսնել բանտը քաղաքի մի այլ մասում՝ հեռու դատարանից կամ կառավարական հիմնարկութիւնից: Դա յիշեցնում է բանտի նախնական դրութիւնը, երբ իշխանաւորը դիտմամբ իր բնակարանի տակ՝ խոր որջերում էր պահում յանցապարտներին, նրանց գլուխների վրայ բազմած՝ իր շուայլ նիստուկացով, իր շւայտ կեանքով ամէն րոպէ զգացնել տալու իր մեծութիւնն ու հզօրութիւնը...

Եւ իշխանաւորի սառած սիրտը, որ դադարել է մարդկային լինելուց, դիտում է բնութեան գեղեցկութիւնը իր պալատից նոյնպիսի անտարբերութեամբ, որպէս և իր ոտքերի տակ կեղտի ու թշուառութեան գիրկը նետուած մարդկային հոծ բազմութեան վիթխարի տանջանքը: Եւ որքան այդ թշուառութիւնը ահռելի է ու աղաղակող, այնչափ էլ նա մեծ է զգում իրեն այդ դիրքում. չէ՞ որ այդ բոլորի կեանքի ու մահու տէրն է ինքը, որ ստեղծուած է միայն իշխելու և հրամայելու համար:

Ճիշտ նոյն ձևով այսօր Թիւրքիայում բանտերը այնպէս են տեղաւորուած, որ բանտարկեալները միշտ էլ կարող են տեսնել բոլոր պաշտօնեաներին սէրայ մանելիս: Ահա անցնում է դատարանի նախագահը, նա որ վճիռ է տուել՝ այդ դժբախտներին միևնոյն տեղը տարիներով բևեռելու: Նզովքի ու անէծքի մի հառաչ է թռչում բանտի մութ խորշից նրա հասցէին, շատ անգամ այնչափ լսելի ու շեշտուած կերպով, որ ինքը-նախագահն և հասկանում է: Բայց արդեօք խղճահարւո՞ւմ է նա: Ոչ: Ընդհակառակը նա հրճւում է մտածելով թէ որպիսի պատիժներ տալ գիտէ... Եւ այդ բոլորը նա համարում է արդիւնք իր արժանիքի, իր բարձրութեան, իր զօրութեան...

Սէրայի տակ գտնւող բանտերը շատ աւելի վատ պայմանների մէջ են, քան միւսները: Այնտեղ արև չէ թափանցում, խոնաւ են և գարշահոտ, և իբրև հին շինութիւններ, ներկայացնում են պատերը հաստ և ընդհանրապէս գետնափոր մութ սենեակներ, որոնց մէջ փոշին ու կեղտը տարիներով են միացած. լուսամուտները փոքրիկ, տձև, կիսախաւար: Ներս մանելիս մարդ երևակայում է թէ կատակոմբներ է այցելում: Միւսները, որոնք սէրայի բակումն են, իբրև աւելի նոր շինութիւններ, համեմատաբար տանելի են. նրանք ներկայացնում են կամ քառանկիւնի բակ, որի շուրջը շարուած են սենեակներ, դռները դէպի բակը, և կամ թէ սենեակները բակի մէջ տեղը միմեանց կպած, որոնց դռները բացւում են շրջապատող բակի մէջ:

Կան և մի քանի բանտեր, որոնց զբօսավայրերը մաքուր օդ չեն տեսնում. դրանք մեծ կօրիդօրներ են, որոնց մէջ բացւում են սենեակների դռները, այնպէս որ սենեակների և կօրիդօրի օդը համարեա միապաղաղ ապականութիւն է: Բարեբախտաբար այդ ձևի բանտեր թւով քիչ են, նրանք գտնւում են վիլայէթների կենտրոնական քաղաքներում:

Բանտերի շինութեան ներքին պատկերը լրացնելու համար՝ պէտք է աւելացնել նրանց կից կամ տակը զնդան կոչուած գետնափոր, կեղտոտ ու խոնաւ հորերն ու խուցերը: Դրանք բանտերի բանտերն են՝ յանցաւոր բանտարկեալներին պատժելու համար: Վերջին տարիները քաղաքական բանտարկեալներին սկզբնական քննութիւնների ժամանակ խոստովանեցնելու գործում ինկվիզիցիական չարչարանքների գաղտնարաններն են դրանք:

Իւրաքանչիւր քաղաքում՝ բանտին կից գտնւում է նաև «կաֆաս» կոչուած մի արգելարան՝ տուրքերը չը վճարողների համար: Դրանք շինուած են գերաններից, շատ անգամ առանց ծածկի: Այնտեղ են լցնում մարդ, կին, պատանի խառը, որոնք միմեանց վրայ թափուած սպասում են առաւօտից մինչև երեկոյ, երբ փաշան դուրս կը գայ Սէրայից՝ և նրանց աղմուկ ու աղաչանքի վրայ՝ իրաւունք կը տայ տուն երթալու: Նրանք միւս առաւօտ պարտաւոր են բերել տուրքը, հակառակ պարագային նորից կը ժողովեն և կը լցնեն այնտեղ: Սէրայի բակը մտնողի վրայ դա ցնցող տպաւորութիւն է թողնում. մարդ սոսկում՝ տեսնելով, թէ ինչպէս այդ հոծ բազմութիւնը, մի մի զանգուած դարձած, գերանների արանքներից թևերն ու ոտքերը դուրս պարզած, գերաններից կախ ընկած, ամառը՝ արևի ճառագայթներին և ձմեռը՝ անտանելի ցրտին է ենթակայ: Գոնէ նստելու տեղ գտնէին խեղճերը:

Քաղաքներում եղած բանտերից դուրս՝ Թիւրքիայում կան նաև ղալա (բերդ) կոչուած բանտերը, որոնք ծառայում են՝ «վճռաբեկ ատեանից հաստատուած» 5 տարուց աւելի դատապարտուածների համար՝ իբրև աքսորավայրեր: Դրանք բոլորն էլ հին բերդեր են, թւով ութ,—Աքեա, Տրիպօլիս Սիւրիական, Տրիպոլիս Աֆրիկեան, Սինոպ, Ռոդոս, Ֆեզան, Փայաս և Բոդրում: Վերջին երեքը ամենախիստ աքսորավայրերն են և որ գլխաւորն է՝ բոլորովին ամայի տեղերում լինելով՝ այնտեղ եղած աքսորականները հէնց բերդի պարիսպների մէջ էլ անց են կացնում իրենց օրերը, և դրա համար էլ այնտեղ օրէնքով պիտի աքսորեն միմիայն այնպիսի յանցաւորներ, որոնք դատապարտուած են թիապարտութեան (քիւրէկ ջէզասի): Իսկ միւս հինգը գտնւում են պարսպապատ քաղաքներում և այն դիւրութիւնն ունին, որ այնտեղ եղած բանտարկեալներից, բերդարգելութեան դատապարտուածները, (ղալաբէնդ) կարող են օրէնքի

համաձայն բանտից դուրս գալ և մնալ յիշեալ քաղաքում՝ պարիսպներից դուրս չը գալու պայմանով ու պարապել ուզած արհեստով: Քաղաքի պարիսպի դռներում պահապաններ կան, որոնք հսկում են անց ու դարձ անողներին և ճանաչում են այնտեղ եղած աքսորականներին, թող որ իւրաքանչիւր մէկ աքսորական իբր նշան ոտքին կրում է մի օղ: Եթէ մէկն ու մէկը փորձէ փախչել, այս անգամ արդէն բանտը կը ձգեն և իբրև պատիժ այնտեղից դուրս գալ չեն թողնի: Բայց ինչպէս ամէն մի օրէնք, նոյնպէս և այս՝ Թիւրքիայում կաշառքի մի մեծ աղբիւր է պաշտօնեաների համար. շատ անգամ թիապարտ բանտից դուրս՝ քաղաքումն է շրջում, իսկ բերդապետը՝ նրան է—բանտում. Այդ անկարգութեան դէմ ուղղած բողոքները միշտ անհետեւանք են մնում...

Առողջապահական պայմաններից թիւրքայ բանտերը՝ քննադատութիւնից ստոր են: Ամէն մի սենեակ լցնում են այնչափ մարդ, որչափ կարելի է սխմել, բառիս բուն նշանակութեամբ. 4×5 քառակուսի արշին տարածութիւն ունեցող սենեակում տեղաւորում են 10—12 մարդ, 7×8 քառ. արշին սենեակում՝ 28—35 հոգին: Սենեակներում քանի մարդ տեղաւորելու գործում ոչ մի օրէնք, ոչ մի սահման չը կայ: Եւ հէնց դրա համար էլ՝ բերուած օրինակները միշտ ենթարկւում են փոփոխութեան. եթէ մի օրում դրսից գան 30 բանտարկեալ, դրանք ուզեն չ'ուզեն, պիտի տեղաւորւին եղած սենեակներում: Չը նայելով սենեակների լեփ լեցուն լինելուն, դրանց եւս ներս կը խոթեն՝ թէկուզ ոտքերը պարզելու տեղ չունենան, թէկուզ մինչև առաւօտ նստած մնան. դրա մասին մտածող չը կայ: Երբ դժգոհութիւն են յայտնում, պաշտօնեաները պատասխանում են. „բախտաւոր էք, որ հիմայ էլ ընկել մեր ճանկը. կոտորածի ժամանակ լինէր, նստել էլ չէիք կարողանալ“:

Հասկանալի է, թէ այդպիսի խեղդուցի մէջ ինչ չափեր կ'առնեն զանազան միջատներ՝ ոջիլ, լու, փայտոջիլ. վերջինները սարսափելի են թիւրք բանտերում. պատերը ծեփուած են դրանցով: Նոր բանտարկեալը մի քանի օր չի կարող քնել, մինչև որ քնի պահանջը հիւանդութեան է փոխւում և նորեկը ուշաթափի պէս քնում է: Անդիմադրաբար քորելուց ձեռք ոտք արիւնոտւում են, վէրքեր բացւում և ապա վերածւում բորոտութեան: Միմեանց հետ այդչափ խիտ նստելը, քնելը և միևնոյն ամանում մի քանիսի միասին ձեռքերով կերակուր ուտելը առիթ է դառնում և „ս ի ֆ ի լ ի ս“ հիւանդութեան խիստ չափեր առնելուն. Թիւրք ամբոխը վարակման մասին ոչ մի գաղափար չ'ունի: Կառավարութիւնն էլ դրա դէմ ոչ մի միջոց չէ գործ դրնում: Բաղնիքը, տաք ջրով լուացուիլը գոյութիւն չունի թիւրք բանտերում:

„Կահկարասիքը“, որի վրայ պիտի նստեն բանտարկեալները, կազմում են երբեմն միայն խ ս ի ր ն ե ր, որոնք շատ անգամ խոնաւութիւնից փտած լինելով՝ գարշահոտութիւն են տարածում իրենց շուրջը: Դրանց վրայ ամէն մի բանտարկեալ փռում է իր սեփական կարպետը, չուլ ու փալասը, աբան, մի խօսքով՝ ով ինչ կարող է: Նոյնը և անկողնի վերաբերմամբ. ամէն մարդ ազատ է՝ բերել տալ տնից ինչ տեսակ անկողին ուզում է: Անկողնազուրկները, լոկ խսիրի վրայ պառկողները անհամեմատ շատ են թւով:

Այդպիսի խեղդիչ սենեակներում ապրելը անկարելի կը լինէր, եթէ ցերեկը նրանց դռները չը բացէին: Սանջակների և վիլայէթների կենտրոնական քաղաքներում բանտի դռները առաւօտ վաղ բացւում են և փակւում արեւ մայր մտնելիս: Այդ օրէնքը չի տարածւում կազաների և նահիէների բանտերի վրայ, ուր օրական երկու անգամ միայն—առաւօտեան և երեկոյեան դէմ—դռները մի մի ժամ բացւում են:

Բակը մտնելիս, երբ բոլոր բանտարկեալները դուրս են՝ մարդու առաջ պատկերանում է մի անսովոր տեսարան.— խառնիճաղանճ մի բազմութիւն, որ յիշեցնում է ոչ թէ բանտ, այլ որևէ շուկայի յետ ընկած մի անկիւն կամ որ և քարվանսարայ՝ լի ամէն տեսակի մարդկային տարազներով: Տարբերութիւն եթէ կայ, այդ էլ հագուստի վերին ծայր քրքրուած ու մաշուած վիճակն է, ապացոյց ծայրահեղ աղքատութեան: Կարծես թշուառութիւնը իր առասպելական ճնշումով թագաւորում է այդ չորս պատերի մէջ: Սակայն այդ չի ազդում մարդկանց վրայ. նրանց տրամադրութիւնը շատ սովորական է: Մի տեղ մի քանիսը անց ու դարձ են անում, մի այլ անկիւնում մէկը ժողոված գլխին մարդկային մի ժխոր՝ հէքեաթ է պատմում, մի ուրիշ տեղ դարդոտի մէկը իր տամբուրան է կրծքին քաշել և ոգևորուած երգելով թրթռացնում նրա լարերը, մի այլ տեղ ոմանք ձեռք ձեռքի տուած „հալայ“ պարն են պարում, չորրորդ տեղում՝ որճեփն է թէյ, սուրճ պատրաստում և սրախօսութիւններով գովաբանում իր ապրանքը, մի ուրիշ խումբ ինչ որ խաղի է բռնուած, շատախօսի մէկն էլ մի քանի մաշուած շապիկ ու վարտիկ ձգած ուսին „խառաջ, հա խառաջ“ է գոռում՝ դրուատելով իր իրերի դիմացկունութիւնը. Նա միջնորդ դէլլէլն է, որ խաղերի մէջ տանուլ տուած բանտարկեալների հագուստներն է ծախում՝ պարտքը թափելու համար: Մի արևակողմում, եթէ ձմեռն է, կամ ստուերում, եթէ ամառն է, շարքով տկլոր մարդիկ են նստած ու քթիւ են անում: Այս ու այն դռան հանդէպ մէկը մանղալի վրայ դրած կերակուրին է նայում ու յաճախ սրան նրան բոթում մի կողմ, որ չը դիպչեն մանղալին ու շուռ տան: Այդ ժխորի մէջ մերթ այս դռանը, մերթ այն՝ մի ծեր, կուզ, աչքերը ճպռոտ սափրիչն է երևում, սրան նրան փաղաքշական խօսքեր ասում՝ ծխախոտ կամ մի „ֆինջան“ սուրճ ստանալու համար..

Ծայրահեղ աղքատութեան դրոշմը կրող այդ բազմութեան մէջ երբեմն երբեմն նկատւում են քիչ շատ մաքուր հագնուած մարդիկ. դրանք այս և՛ այն ցեղերի պետերն են, որոնք ներս են նետուած բանտ՝ նրանցից դրամ քաշելու համար և կամ թէ այնպիսի անձնաւորութիւններ են, որոնց հակառակորդները աւելի են կաշառք տուել և դրանով կարողացել դրանց դատապարտել տալ:

Բանտարկեալները ստանում են կառավարութիւնից թ ա յ ի ն—օրական 300 դիրհէմ հաց (1 կիլօ) և ուրիշ ոչինչ: Ջրի համար պէտք եղած կարասներն ու թասերն անգամ բանտարկեալների հաշւով են առնւում: Այնուհետև ամէն մարդ ազատ է ուզածն ուտել և հագնել: Համազգեստ չը կայ: Քիչ շատ ունևորները խմում են թէյ և սուրճ, կերակուր են շինում, նարգիլէ և ծխախոտ ծխում. իսկ աղքատը ազատ է սովամահ լինելու: Դրանցից շատերը ստիպուած են իրենց հացի կէսը ծախել 7—10 փարայի (հինգ փարան մի կոպէկ) և դրանով մածուն, խաղող, դոշաբ առնում և օրը անցկացնում: Ծախողների հացը առնում են պաշտօնեաներն և սարիկանները: Երբեմն գալիս են շրջակայքի աղքատ բնակիչները՝ նոյնպէս հաց գնելու նպատակով: Այդ դէպքում հացի գինը բարձրանում է. դրա համար էլ պաշտօնեաները արգելում են ծախել դրսի մարդկանց, որով և թայինի գինը ընկնում է: Դրանից օգտւում են իրենք պաշտօնեաները և ամբողջ թայինը շատ անգամ 10 փարայով գնում:

Բանտի ներքին կեանքի վրայ համարեա հսկող չը կայ. ինչ ուզում են, թող անեն, ինչով ուզում են, թող պարապեն. այդ իրենց գործն է, բաւական է որ փախչող չը լինի: Ամէն մարդ իր համար ամաններ է բերում, տախտակով պատերի վրայ դարակներ շինում. պարաններ, որչափ ուզէք, դա բանտային սովորական կարգերին հակառակ բան չի համարւում: Դեռ սա ոչինչ. գաղտնի կերպով ներս են բերւում դանակներ, գործիքներ, հաստ փայտեր, որոնք ծառայում են կռիւների դէպքում իբրև զէնք: Բանտային խուզարկութիւնների դէպքում շատ անգամ խենջալներ ու ատրճանակներ են գտնում: Բոլորը ժողովելուց յետոյ չի անցնում մի քանի օր, նորից բանտը լցւում է այդ իրերով..

Աղքատ բանտարկեալները սովամահ չը լինելու համար ստիպուած են աշխատել. գործում են գուլպաներ, դրամի ու ծխախոտի քսակներ, գլխի արախչիներ եայլն: Իսկ բերդերում տախտակեայ արկղներ, ծխախոտի տուփեր, նալիններ՝ բանւածներով և սադաֆներով զարդարուած: Շինած իրերը ուղարկում են շուկայ ու ծախում: Աշխատաւորի վաստակը լինում է օրը մօտ 20 փարայ: Դա արդէն բաւական է համարւում թշուառի կեանքը քաշ տալու համար: Ամենից „չաղ“ պարապմունքը աղքատ բանտարկեալի համար՝ որևէ սենեակում ծառայի պաշտօն ունենալն է: Նրա վարձը ամէն

մի օր մէկի հաշուին ապրելն է. իր թայինը ծախում է, որի դրամը իր վաստակն է։

Բայց ծառայից, իւրաքանչիւր սենեակ ունի իր չաուուշը—պետը, նոյնպէս բանտարկեալ։ Դրանք սովորաբար բանտի մէջ աչքի ընկնող, ուժեղ ու քիչ շատ խելացի մարդիկն են։ Նրանցից շատերը իրենց իրաւունքը ի չարն են գործ դնում. եղած ծախքերին չեն մասնակցում և ընդհակառակը նորեկ բանտարկեալներից որոշ տուրք են առնում՝ չաուուշլը գանձնով. շատ չաուուշներ ծառային պահում են պաշտօնի մէջ նրա վաստակի մի մասը ստանալու պայմանով։ Շատ անգամ էլ աւելորդ անկողիններ են պահում և նորեկներին վարձով տալիս. նրանք են հսկում սենեակի մաքրութեան և անցած ու դարձածի վրայ և միևնոյն ժամանակ պատասխանատու են պաշտօնէութեան առաջ՝ սենեակում պատահած կռիւների համար։

Վաշխառութիւն էլ գոյութիւն ունի թիւրքական բանտերում։ Տեղացի բանտարկեալները, որոնք կերակուր են ստանում իրենց տներից, իրենց թայինները ծախում են վաշխառուին՝ ամսով։ Եթէ թայինը արժէ 20 փարայ, (կէս ղրուշ) նա առնում է ամսականը 10 ղուրուշով։ Վաշխառուն դրամ է տալիս չունևորին տոկոսով, որ վերջինս թել առնէ և գործէ։ Ամսական՝ մի մէջիդիէի համար՝ ստանում է 3 դահեկան, որ ասել է թէ՝ 7 ամսում իր դրամի կրկինն է ստանում։ Եթէ ժամանակին պարտատէրը չէ կարողանում վճարել, վաշխառուն նրա թայինն է խլում, մինչև որ պարտքերը թափի։ Այդպիսի դէպքերում երբեմն դանգատներ են լինում, խնդիրը հասնում է փաշային, բանտի տնօրէնը բացատրութեան է կանչւում, բայց որովհետև նա որոշ տոկոս է ստանում վաշխառուից, ուստի և նրան պաշտպանում է։ Եթէ պարտատէրը ոչինչ չունի ուտելու, տնօրէնը կարգադրում է օրական կէս թային միայն տալ նրան—իսկ կէսը պարտատիրոջ, մինչև որ պարտքը հանգչի։ Մի քանի տեղ տոկոսով դրամ տալը այնքան սովորական բան է դառնում, որ նոյնիսկ քաղաքի չքաւոր մարդիկ դալիս են բանտարկեալ վաշխառուներից դրամ վերցնելու՝ բերելով իբրև գրաւական՝ հագուստներ, զարդեր, և նոյնիսկ անկողին։ Զը կարծւի թէ վաշխառուն բանտանելիս դրամի տէր է եղել։ Դէպքեր են եղել, որ ճարպիկ մի գիւղացի սկզբում ծառայութիւն անելով՝ և ապա իր վաստակը տոկոսի տալով՝ տասն տարուց յետոյ, բացի իր ապրուստը հոգալուց, որ համեմատած չքաւորների հետ շատ փառաւոր է եղել, տուն վերադառնալիս 50 ոսկի դրամ է տարել հետը։ Իսկ դա մեծ գումար է Թիւրքիայի խուլ անկիւններում։

Բանտարկեալների ժամանցի մէջ մեծ տեղ են բռնում խաղերը և յատկապէս „եռատող օյունու“։ Դա սենեակի խաղ է։ Մէկը իր բարձը շպրտում է դիմացը, երկրորդը նրան պատասխանում է, ապա երրորդը, և այսպէս բոլորը. մի վայրկեանի մէջ բարձերը այս ու այն կողմ են թռչում. բուրդը, բամբակը, լաթի կտորները, խոտն ու դարմանը, ուրնցով լցած են բարձերը՝ ծանր փոշու հետ լցնում են սենեակը։ Ապա սկսում է սոսկալի իրարանցում... Մէկի տաքն է շուռ եկել, միւսի աչքը ցաւել, երրորդի գլուխը պատին դիպել. աղմուկն ու հարայ հրոցը, հայհոյանքն ու վայնասունը միանում է այդ խաղի անբաժան ընկեր տուր ու դիբոցին։ Այդ միջոցին միւս սենեակներում գտնւող ծանօթներն ու ընկերները սկսում են գոռալ, դռներին զարկել ու ապառնալիքներ ուղարկել հակառակորդին։ Դրա դէմ բողոքում է իր սենեակից մէկը, որ հակառակորդ է նրան և ահա նոյն կռիւը փոխադրւում է երկրորդ սենեակը։ Աղմուկը ընդհանուր է դառնում։ Կարծէք այդ վայրկենին բանտը մի գազան է, որ մռնչում է անողոք ցաւից և անիծում կեանքն ու աշխարհը։ Երբ կռիւը լուրջ կերպարանք է առնում, երբ մի քանիսն արդէն վիրաւորած են, այդ ժամանակ է միայն վաչութիւնը միջամտում է և վերջ տալիս կատաղի իրարանցումին...

Սովորաբար բանտերում լինում է կռւի տրամադիր մի տարր. քաջութիւն, իգիթութիւն վաստակելու տենչը մեծ տեղ է բռնում այդ գործում։ „Իմ երկրացուն հայհոյեցին“ կամ „իմ սենեակի մարդուն անարգեցին“ ասում է մէկը և առաջ նետւում։ Դա արդէն կռւի հրաւէր է։ Բայց դրանք ոչինչ են համեմատած այն կռիւների հետ, որոնք ծագում են „տղայի“ խնդրից։ Դա արդէն ուրիշ բան է. այդտեղ խօսում է ամբողջ Թիւրքը աշխարհի ստոր բնազդը, գազանային կիրքը։ Եւ որովհետև բանտերում միշտ էլ կան 14—16 տարեկան տղաներ, հէնց դրանց առթիւ էլ տեղի է ունենում այդ գազանային պայքարը։ „Խալիլը զբօսնեց նրա հետ և ոչ ես“ նախանձում է մէկը այնպիսի մի կատաղութեամբ, որ դժւարէ նկարագրել։ Սկսւում է մի կեղտոտ ինտրիգ. իւրաքանչիւրը իր պաշտպաններն ու բարեկամներն ունի։ Մի փոքրիկ առիթ և ահա երկու կողմը զինւած ամեն տեսակ իրերով—փայտերով, դանակներով, կերակուրի ամաններով, նալիններով՝ միմեանց վրայ են յարձակւում։ Բակը ծածկւում է արիւնով. մի քանի վիրաւորներ այս ու այն կողմ, երբեմն իսկ անշնչացած դիակներ։ Այդ միջոցին ոստիկաններ, զինւորներ, պաշտօնեաներ լցւում են բակը. բոլոր բանտարկեալները փախչում են սենեակները և դռները փակում։ Ծեծի շարունակութիւնը տեղի է ունենում այդ ժամանակ. պակասը պաշտօնեաներն են լրացնում։ Մի քանի պարապլուխների էլ շղթայում ու նետում են զնդանը, և նոր դատ սկսում այն մարդկանց դէմ, որոնք արդէն 101 տարւայ են դատապարտւած...

Այդ անարգ զզայումի հետ է կապւած և մի տարօրինակ երևոյթ, որ մեծ հաճոյք է պատճառում որոշ տեսակի բանտարկեալներին։ Վաշխառուները գրաւ վերցրած կանայի հագուստները հագցնում են դեղեցիկ պատանիներին և պարածել տալիս։ Նւագի ու երգի, նարդիլէի ու յաճախ օղիի, մանաւանդ „Էսրարի“ ազդեցութեան տակ Մահմեդի երևակայացած „ջէննէթը“ այդ վայրկեանին հանդէս է գալիս և ժամերով զբաղեցնում մեղի ու բթացած ամբոխին...

Աղօթելն էլ մեծ տեղ է բռնում բանտերում։ Դա տեղի է ունենում մեծ ճշտութեամբ ոչ այնքան մի պարտք կատարելու, որչափ ճշմարիտ իսլամ երևալու համար։ Ամեն տեսակ կեղտ դրա տակ ծածկւում է. այդ պատճառով էլ ամենախայտառակ մարդիկ աղօթքի նկատմամբ խստապահանջ են և ծայրահեղ կրօնական։

Նկատելի մի իրողութիւն։ Շատ թիւրք բանտարկեալներ դուրս գալուց մի քանի օր չ'անցած՝ կրկին վերադառնում են բանտ։ Նրանց ասելով՝ ժամանակը աւելի լաւ է անցնում այդտեղ, քան դուրսը։ Երբ մէկը դատապարտւում է 3 տարւայ բանտարկութեան, ժպտալով ասում է. „մի տարի մի կողքիս վրայ կը պառկեմ, մի տարի՝ միւս, մի տարի էլ մէջքիս և ահա երեք տարին անցաւ“։

Թիւրքական բանտը այսպիսով ներկայանում է մի հիմնարկութիւն, որ ֆիզիքապէս և բարոյապէս ոչ միայն փչացնում է բանտարկեալներին, այլ և նրանց միջոցով իր ազդեցութիւնները ու ախտերը տարածում է աւելի հեռուն—երկրի այլ և այլ անկիւնները—այդ աշխարհի դժոխային պատկերը կատարեալ անելու համար։

ՄԱՐ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԹՈՐԷՆ ՍԱՐԳԻՍԵԱՆ

(ՊԵՏՐՈՍ ԱԶԻԶՈՎ)

1877—1905

Դարձեա՜լ կախաղան։

Այո՛, հայ զինւոր, դարձեալ խարոյկ՝ազատութեան ճամբուն վրայ, դարձեալ զոհաբերութեան նոխազ՝ Բռնութեան հեթանոս Ցաճարին առջև, դարձեալ որբացած մօր վայնասուն, դարձեա՜լ ցաւում, դարձեա՜լ վրէժխնդրութիւն։

Ո՛չ, կանգ չ'առներ կրօնա՝ հայ երիտասարդութիւնը այլևս ո՛չ մէկ մարդկային զոհողութեան, ո՛չ մէկ վանգի առջև։ Կա՛ծես կռիւը, անհանգստութիւնը, տենդն ու հեռոտական մահը հոգեկան պահանջներ են իրեն համար. կա՛ծես անիկա այսօր բաւարարութիւն կը գտնէ միայն խիզախումի, անձնազոհութեան մէջ։ Հայուն ցեղային բնազդները, ազգային կեանքը երբէք այսքան շքեղ ուժով չե՛ն ձգտած



դէպի ազատ արևը, դէպի լոյսը. Երբէք հայ երիտասարդութեան սիրտը այնքան սխրալի յուզումով, այնքան կատաղի սիրով բաբախած չէ՛ դէպի ազատութիւնը։ Եւ հայը ամէն անցեալէ աւելի այսօր իրաւունք ունի ապրելու։

Նայեցէք այն խաւար, մահաբեր Անցեալին՝ որ ամօթի, գերութեան ծանր շղթաներով կեցած է մշուշի պէս հայուն և հայրենիքին վրայ. նայեցէ՛ք այդ մեռելատաներին՝ ուր ժողովուրդին կենսագործ սերունդը կքած է կապարէ համակերպութեան տակ, ուրկէ կուգան հոգիի յուսահատական աղօթ, հոգիի ցաւակոծ հեկեկանք և ուր հայ աշուղին տրտում երգն անգամ խեղդուած է համայնատարած արհաւիրքին մէջ։

Բայց ահա կը նշուլէ կարմիր առաւօտը, կարծես կախարդական զօրութիւն մը կայ անցնելու մեր մրրկալից հորիզոններէն։ Հայաստանի սառած, անկենդան ծմակներուն ու հովիտներուն մէջէն կը փչէ կենդանաշունչ քամին և տեղի կուտենայ կեանքի հրաշալի մոգութիւնը,—ալևոր Մասիսը երիտասարդական կորով կը հագնի, հայրենի աւերակ բերդերն ու պարիսպները կը յիշեն ու կը սկսին մրմնջել դարերով մոռացուած ռազմական սիրելի երգերը և հայը կը ցնցէ իր ստրկական շղթան։ Կռի՜ւ բռնութեան դէմ, անտեղիտալի, յամառ, և երբէ՛ք յուսահատական։

Հո՛ն, հեռաւոր հայրենիքին մէջ շղթան կը հառաչէ միշտ և Ազատութեան սահմանները բռնաբարող պառնէշները՝ բանտ ու կախաղան՝ կը կրեն մեր կորիճներուն յարձակումը։ Եւ ռազմական այս ժխորը կ՚արձագանգէ մեր հորիզոններէն անդին ու կը հանի իրեն հետ՝ ինչ որ կը կ՚երազէ, ինչ որ կը զգայ հայ հողն ու ջուրը։ Վանն ու Պոլիսը, Սասունն ու Խալօվան, Պիթլիսն ու Մանիսան կը հոսեն այդ բուրումը ու հոգիով կ՚ողջագուրուին։ Ամէն տեղ՝ ուր որ հայու մը երդիքը կը մխայ, ուր որ հայու մը ճրագը կը վառի՛ կը ցոլէ հայրենիքի փրկութեան կարօտը։

Ու խիզախները, յանդուգները առաջ կ՚անցնին։

Եւ արժանաւորները կ՚իյնան հերոսական մահով։

Ահա անոնցմէ ամէնէն վերջիններէն մէկը՝ Պ ե տ ր ո ս Ա գ ի գ ո վ ը։

Ի՞նչ պիտի ըլլար անհանդարտ, եռուն և մշտայոյզ կեանքը այս երիտասարդին՝ եթէ պատանեկութեան իր առաջին ծիլերը չի բողբոջէին ոգևորութեան ու խանդավառութեան ժամանակի մը մէջ։ Գուցէ միջավայրին օտար բուռն հոսանքը նետէր զա՛յն մեղաւոր ափունք մը, գուցէ իր հոգիին յատակը եփ եկող կիրքերը՝ չեղելով իրենց ազնուութենէն՝ խեղդէին ինչ որ կար հոն մաքուր, գնահատելի ու թանկ։ Բայց, լուսաւոր իդէալը գրաւ զա՛յն շիտակ ճամբուն վրայ ու մղեց դէպի ցանկալի նպատակը, դէպի անձնուիրութիւնը։ Պատանի էր Պետրոս երբ թողուց Մանիսան և ծննդական տունը՝ որուն մէկ հատիկ մշանջենաւորող յոյսն էր։ Նախ Իզմիր, ապա Ալեքսանդրիա՝ չարչարուեցաւ զրկանքէն, չարչարուեցաւ անօթութենէն, բաղխեցաւ այն բոլոր դժուարութիւններուն՝ որոնք առաջին օրէն իսկ այնքան անգթօրէն փորձեցին զի՛նքը. բայց, իր կամքը և իդէալը մնացին անպարտելի։ Մէկ բան միայն կը խօսէր իր գիտակցութեանը մէջ. դէպի՛ Կովկաս, դէպի՛ սահմանագլուխ՝ ուրկէ կարելի է ընկերոջ հետ կուշտ կուշտի սեղմած՝ հայրենի հողին վրայ ոտք դնել և թշնամին հանդիպիլ։ Հասաւ վերջապէս Կովկաս, առանց յանձնարարականի, առանց ծանօթացման. ո՛չ ոք կը ճանչնար զինքը, ոչ ոք բան մը գիտէր իր մասին։

Ագիգովը կարող է ծառայել անձնավստահութեան ու անկուն կամքի գեղեցիկ օրինակներէն մէկը մեր զինուորական շարքերուն մէջ, երբ այնքան արգելքներ տարբել անցնելէ ետքն ալ՝ դեռ գիշերներ Կովկասի մէջ աղքատութեան անկիւն մը չի կրցաւ քնանալ անօթութեան պատճառով, երբ հարկ եղաւ ամէնէն դժնդակ առաւօտներուն սպասել, մինչև որ ժամանակի ու ընթացքին մէջ ինքզինքը ճանչցուց։

Մինչև հոս Պետրոս միայն ուղին է որ փնտռած է, ճակատ զարնելով թշուառութեան բոլոր անկիւնաքարերուն։ Անկէ ետք անխոնջ գործունէութեան և անպայման անձնուիրութեան շրջանն է որ կը սկսի։ Խրկուեցաւ գիւղեր՝ ուր խօսեցաւ, համոզեց իր հաւատքին ու զգացումներուն ազնուութեամբ։ Մասնակցեցաւ Խանասորի կռւին։ Եւ իր քաջութիւնը, իր անվեհերութիւնը արժանի է հիացումի։ Գտնուած է Կովկասի ու Պարսկաստանի շատ մը շրջաններու մէջ և բոլոր այն ընկերները որ զինք ճանչցեր են՝ անմոռանալի սիրով ու գուրգուրանքով կը յիշեն իր անունը։

Խանասորի մէջ էր որ դիւցազնաբար կռուած միջոցին՝ ինկաւ վիրաւոր։ Մութ էր, խումբը ստիպուած էր նահանջել. ընկերները չէին կրնար Պետրոսի զգայազուրկ մարմինը փոխադրել իրենց հետ՝ պէտք էր աճապարել, բայց դժուար էր սիրական ընկերը կիսամեռ յանձնել թշնամիին։ Եւ ֆէդային կը կատարէ վերջին պարտականութիւնը,—համբոյր մը՝ ընկերոջ մահաբեր դէմքին և գնդակ մը անոր՝ խնայելու համար գերութեան ամօթը։ Կ՚անցնին ժամեր, հրացաններու որոտը և սուրաձայները կը դադրին, գիշերուան անուշ քամին կ՚իջնէ լեռներէն և կը շոյէ կռւի դաշտին վրայ պառկած անտէր դիակները։ Զովութիւնը կը կազդուրէ Ագիգովի արիւնաքամ մարմինը և զինուորը աչքերը կը բանայ ցնորակոծ ու չարատանջ երազէ մը, մինակ է, բոլորովին առանձին՝ լեռան մը կուշտը և իրեն հետ լուսնկային տրտում լոյսը՝ որ կը հսկէ մռայլ խաղաղութեան վրայ։ Կը յիշէ ինչ որ անցած էր, կը յիշէ ինչ որ աղօտ, անրջային կերպով լսեց ընկերներուն իրեն համար բառերը, կը ստուգէ վէրքերը. գնդակը հա՛նդիպած է ոտքին։ Գիտէ թէ խումբը ո՛ւր պիտի հանգչի այդ առաւօտ։ Կաղնիկաղ, սողալով, իյնալով՝ լուսաբացին կը հանդիպի ընկերներուն. և գրկախառնութիւն ու ողջագուրում։

Իբրև անվախ տէրօրիստ՝ ստանձնած է վտանգաւոր պարտականութիւններ և կատարած՝ պաղարիւն ճարտարութեամբ։ Իր ձեռով մահուան դատապարտուած են Շիկօ և Սամուէլ անունով մատնիչները, ինչպէս նաև Շէրիֆ բէկ աւազակապետը, առաջինը՝ Ալէքսանդրապոլի, երկրորդը՝ Թիֆլիսի և երրորդը՝ Բագուի մէջ։ Իբրև նուիրուած զինուոր՝ առաջնորդած է զինավարժական խմբերու, կատարած է ռազմական փոխադրութիւններ և եղած է ժամանակներ՝ ուր իր անձնական պէտքերը հոգալու համար քար կրած է բեռնակիրի շալակով՝ չի ծանրանալու համար կազմակերպութեան վրայ։ Եւ հանգստի ժամերու մէջ, յուզման ու

յափշտակութեան վայրկեաններու տակ՝ հոգիին երգերը առած է թուղթի վրայ։

Իր վերջին գործը՝ Պոլեօզի տէռօրն եղաւ 1902-ին Իզմիրի մէջ, ուր ձերբակալուեցաւ և մահուան դատապարտուեցաւ։ Իրեք տարի հեծեց ու գալարուեցաւ բանտի մէջ այս անհանգարտ, այս յարաշարժ ու գործունեայ կեանքը, ինչպէս առիւծը, որ կը կրծէ իր դաւադեղին երկաթեայ ձողերը, փնտռելով անկաշկանդ ազատութիւնը, և ահա անցեալ տարի պայթեցաւ հսկայ ձեռնարկի աղէտը։ Պետրոս բնազդօրէն նախազգաց թէ դուրսի մրրիկը կը սպառնար իրեն։ Օգոստոս 8-ին, առաւօտ դէմ, արշալոյսէն առաջ յանկարծ բանտապետը եկաւ արթնցնելու Ազիզովը, պատրւակելով թէ իրեն ցոյց պիտի տան ձերբակալուած մը։ Գաւիթին մէջ անցուցին երկաթեայ ձեռնակապերը։ Դուրսը, դրան առջև արդէն կը սպասէր պատրուտի կառքը, ուր քաղաքային ներկայութիւնը հաւանականաբար զգացուցած պիտի ըլլայ իրեն թէ՝ ո՛ւր կ'առաջնորդեն զինքը։ Կառքը կանգ կ'առնէ Ալի փաշայ մէյդանը, ուր կախաղանը գիշերուան միջոցին կառուցուած ուարուած էր։

Ազիզով ո՛չ մէկ երկիւղի, ոչ մէկ մարդկային տկարութեան նշան ցոյց տուաւ. հպարտ, վեհանձն, վսե՛մ, մահուան դիմաց խօսել ուզեց։

—„Ահա կախաղանին տա՛կ կը գտնուիմ այս բոպէին.
„վայրկեան մը ետք պիտի կախուիմ այդ պարանէն, սակայն
„վախ չե՛մ զգար բնաւ, որովհետեւ վստահ եմ թէ ես
„չե՛մ մեռնիր... կախաղանը իմ հին երազն էր արդէն,
„մահը նշանակութիւն չունի ինծի համար, շատ անգամներ
„առիթ ունեցած եմ զայն աչքովս տեսնել... տասը տարի է որ յեղափոխական եմ և շատ գործեր կատարեր եմ։
„Ես իմ պարտքս կատարեցի, խիղճս հանգարտ է։ Ամէն
„մարդ պարտական է իր մարդկային պարտաւորութիւնը կատարելու... Ես պարսկահպատակ չե՛մ, անունս Պետրոս
„Ազիզով չէ՛, ես բնիկ Մանիսացի եմ և անունս Խորէն
„Սարգսեան է։ Ծերունի մայր մը ունիմ Մանիսայի մէջ.
„վրաս մէկ ոսկի կայ, 9 ոսկի ալ ընտրեկս ունիմ, կը խնդրեմ, որ այս տասը ոսկին մայրիկիս յանձնէք և ես թաղուիմ Մանիսայի մէջ..."

—Քաշեցէ՛ք չուանը, լսելի եղաւ ոստիկանապետին անգղի կառաչը։

Եւ, ո՜վ վագերային անխղճութիւն, չուանը դիտմամբ ծնոտին մօտէն ձգեցին, որպէսզի անպաշտպան զոհը երկար տանջուի... Ու Խորէնը՝ ամբողջ մէկ օր ցցած ճակատը երկնքի դէմ, յառ՞ած բողոքի ու վրէժխնդրութեան արդատասատ նայուածքը վերևի անհուն Աստծուն՝ դեռ հըպարտ էր, միշտ խրոխտ։

Հայրենիքի սգաւոր դրօշակը ծածկեց կարիճ մըն ալ փառքով...

ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

Մենք ստացանք հետևեալ տեղեկութիւնը Կովկասից. „Հայ Թրքական համագումարում արտասանած մի քանի ճառեր Դաշնակցութեան գործունէութեան մասին, ուղղած կարմիր-սուլթանի անարգ ռէժիմի դէմ, մեծ յուզմունք են առաջ բերել Կ. Պոլսում, պալատական շրջանի մէջ։ Լուր կայ, որ Թիւրքիայի արտաքին գործերի մինիստրութիւնը դեսպանութեան միջոցով հարցապնդում է արել կովկասեան փոխարքային... Ըլդըզի ղեկավարներն հասկանալ չեն կարողանում, թէ ինչպէս կարելի է այդպիսի ճառեր արտասանել փոխարքայական պալատում, պաշտօնական անձանց ներկայութեամբ, մի բարեկամ կառավարութեան հասցէին։ Յեղափոխութեան այդ փոքրիկ յաղթութիւններն անգամ սարսափ են ազդում սուլթանական ռէժիմի պաշտպաններին"։

—

Բերկրանքով ենք արձանագրում հակակառավարչական այն շարժումը, որ սկսուած է Էրզրումի Թիւրք ժողովրդի մէջ։ Սպառնալիք իշխանութեան հասցէին, գործադուլ, ըմբոստութեան ցոյցեր—այս բոլորը մահմեդական ամբոխի կողմից, որ մինչև այժմ բռնապետութեան հաստատուն պատուանդանն էր նկատուած, և որը, ծանր է ասել, ոչ միայն խուլ մնաց հայկական շարժման հանդէպ, այլ և սուլթանի ձեռքում կոյր գործիք եղաւ կոտորածների սև օրերին։ Օսմանեան ժողովրդի ապագայ շարժման նախանշաններից մէկն է այս, գուցէ թոյլ ու դժգոյն, բայց արժանի ջերմ քաջալերութեան։

—

Կատարուե՜ց... Վրիժառու ձեռքի հարուածների տակ թաւալգլոր եղաւ բարենին—հերոսուհի Սպիրիդոնովայի դահիճը։ Նա, որ երեկ „արդարացած", լրբենի քրքիջը բերանին ճեմում էր մայրաքաղաքի փողոցներում, նա, որ իր ցաւն էր արտայայտում թէ ինչո՞ւ քստմնելի ոճիրը կատարելուց յետոյ՝ հէնց ինքը չը սպանեց իր զոհին, որպէսզի աւելորդ „գլխացաւանքից" ազատ լինի և մխիթարւում էր այն յուսով, թէ իրեն կ'աջողուի մահուան դատապարտուած Սպիրիդոնովային իր ձեռքով կախել,—այսօր նա, Աւրամովը, ինչպէս հեռաւորին ուեսնեց, արիւնաշաղախ թաւալւում է աղբի և փոշու մէջ՝ շանթահարուած տերրորիստի ձեռքով... Դա ընդհանուր ցասման մի անխուսափելի արտայայտութիւն էր։ Ժողովրդի ցասումը՝ ուժգին արձագանքներով անդրադարձած իր լուսագոյն զաւակների—յեղափոխականների զգայուն սրտերում՝ շատ սև հոգիներ է ուղարկել տարտարոսի խորքը։ Այդ ցասումը մինչև այժմ պատուհասել է բռնակալ ռեժիմի այս կամ այն սխրագործ ներկայացուցչին. բայց կը գայ ժամանակ—և այդ ժամանակը շատ հեռու չէ—երբ յանցապարտների այն վոհմակը, որ այսօր ամբողջ Ռուսաստանը մի ընդարձակ մարդկային սպանդանոց է դարձրել, իր անզօր մերկութեամբ, գլխակոր պէտք է կանգնի ժողովրդի ահեղ դատաստանի առջև... Մի յըղփացէք ձեր վաղանցուկ զօրութեամբ, ոճրագործնե՛ր, դեռ գալիք գայ...

—

Մեզ տեղեկացնում են վստահելի աղբիւրից, որ սուլթան Համիդի սպանութեան փորձի մէջ մեղադրուած Էդուարդ Ժորիսի խնդիրը լաւ ընթացքի մէջ է։ Ֆրանսիական և Անգլիական կառավարութիւնները, ինչպէս և Միացեալ-Նահանգները խոստացել են պաշտպանել բելգիական կառավարութեան արդար պահանջը ուղղած Բ. Դռան, և հիմք կայ կարծելու, որ սուլթանի կառավարութիւնը կ'ընկճուի ու Ժորիս, ներումն ստացած, կը յանձնուի Բելգիային։

—

Եւրոպայի նպաստաւորներու դիմումին՝ Միացեալ-Նահանգների նախագահ Ռօզվէլտը, արտաքին գործերի պաշտօնէութեան միջոցով, հետևեալ պատասխանն տուած է, ուղղած՝ այդ դիմումը ներկայացնող պ. Ջէմս Րայնօլդին։ Առաջ կը բերենք այդ պատասխանը, իբրև փաստաթուղթ։

Տէ՛ր,

Նախագահը այս պաշտօնատան յանձնած է ընդունագրելու համար՝ ձեր յունուար 18-ի նամակը, որուն հետ ներկայացուեցաւ բազմաստորագիր խնդրագիր մը Ֆրանսայի, Իտալիոյ, Պելժիքայի, Զվէտի, Դանիայի, Մեծն Բրիտանիոյ, Հոլանտայի, Գերմանիոյ և Աւստրո-Ունգարիոյ ազդեցիկ ու ներկայացուցիչ մարդոց կողմէն, Նախագահին կոչ ընող՝ որ գործի ձեռնարկէ՝ Թիւրքիոյ հայ հպատակներու կրած հարստահարութիւններու առաջն առնելու։

Խնդրողներու բարձր դիրքը, եթէ կարելի ըլլար, աւելի մեծ շահագրգռութիւն մը պիտի տար խնդրի մը, որ արդէն գրաւած է Նախագահին ամէնալուրջ ուշադրութիւնը անցեալ երկար տարիներէ ի վեր։

Այս կառավարութեան այլ և այլ ճիւղերը կրկին ու կրկին արտայայտած են ամերիկեան ժողովրդի համակրանքը ամէն երկրի հարստահարուածներուն, և դժբախտ հայերու պարագային մէջ ալ՝ նոյն ինքն ամերիկեան ազգին ձայնով։ Ոչ մէկ շրջանակի մէջ տարակոյս չկայ թէ Նախագահը կը բաղձայ որ հայերն ունենան կեանքի, գոյքի ապահովութիւնը, որի երաշխաւորելը եղած է եւրոպական պետութիւններու միաբան նպատակը։

Թիւրքիոյ հպատակ հայերու տառապանքները բարձրաձայն դարման և հատուցում կ'աղաղակեն. ամբողջ մարդկութեան մարդկային զգացումը կը վիրաւորէն և աշխարհ

միացեալ աւաղելու և դատապարտելու այն ցեղային ներհակութիւնները, որ իրարու դէմ հանեցին Թիւրք բնակչութեան անհաշտելի տարրերը։ Ոչ մէկ ուղղադատ մարդ կրնայ ականատես ըլլալ այդպիսի դէպքերու, առանց տենչալու որ ուժ ունենայ կանխելու զանոնք։ Ես անկեղծօրէն կը բաղձայի որ Միացեալ-Նահանգները այդ զօրութիւնն ունենային. բայց հաւատար անկեղծութեամբ համոզուած եմ, որ Միացեալ-Նահանգներու ջանքերը, որոնք անհրաժեշտօրէն անբաւական պիտի ըլլան օրինական և զօրաւոր միջամտութեան մը համար, քիչ կամ ոչինչ պիտի կատարեն, և ուրիշ պետութեան մը գործերուն ու շարժառիթներուն պարսաւ մը ենթադրելով, ինչպէս անխուսափելիօրէն պիտի ըլլայ ալ աւելի վնաս քան բարիք պիտի ընէ այն դժբախտ արարածներուն, որոնց վիճակը բարեբարել նպատակ ունէր։

Մնում եմ, Տէր, ձեր խոնարհ ծառայ

ԵԼԻՀՈՒ ՌՈՒՏ

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Ալէքսանդրիոյ Կոմիտէն՝

Կիլիկիա խմբի անդամներ. եւ նուէր 385 դահ. Զեռմ խ. 393, Սասուն խ. 195, Տալւորիկ խ. 189. Նոյն խ. հանգ. զէնքի համար 116. 20, Աքէնի Կիլիկիա, Արեւելեան, եւ Արարատեան խմբերու անդ. 589. 20, Տ. Եալ-էն 25: Գումար 1893 դահ. ողջ:

Պալքանեան Ընդ. Կոմիտէն՝

ՊՈՒՔԱՐԷՇՏԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷ՝ (1905-ի յուլիսէն — դեկտեմբեր) նեսեւեալ խմբերից՝ Անդրանիկ 54 ֆր. Վազգէն 39, Սէրէմնեան 69, Ֆէյայի 42, Կայծ 42, Զէյթուն 40, Նեմրուզ 48, Շամէ տիկ. 48, Արամ 42: Գումար 424 ֆր.

Ոսկանապատի Կ. Կոմիտէն՝

(Շարունակութիւն նախորդ համարի)

ԾԱՌԱՍՏԱՆԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ՝ (յունու. 1-ից մինչ. մայիսի 31-ը) նեսեւ. խմբերից՝ Փունջ 49. 10, Արմաշ 13. 50, Նեսանից 6. 15, Արեւալոյս 6. 65, Զայլաղի 5. 25, Ծառաստան եղած փինակարկատ 66, Փունջից նուէր 6. 76, Բամբակի Սերոբ-Աղբիւր խ. 48, Լան-Մաղի Ծիծեռնակ խ. 22, Նոյն խ. խորհուրդ մեծ. 66, Պաշարւած գաղ. Փերուզայից 1, Բանդւած գաղ. Հերոս խ. 40, Նոյն գաղ Աւոս Երկաթ խ. 63. 85, Ծառաստանից նուէր 5. 05, ՀԵԹՈՒՄԵԱՆ ՇՐՋԱՆԻ նես. խմբեր. Մշակ 69, Զինւորագ 3 60, Խենթ 56. 06, Լուսաւորիչ կէս. 5. 10, Կայծակ եւ Լուսաւորիչ 3. 05, Խորհուրդ մեծից 55. 50, Երկնոյթից 8. 56, Հայկազուն խ. 6, Զայլաղ խ. 7. 70, Բամբակ գաղ. Մասիս խ. 19. 35, Լան-Մաղ գաղ. Ծիծեռնակ խ. 35. 15, Ծառաստանի ներկայացումից 90. 76, Խորհուրդ մեծ. 106. 75, Վարդանանց տօնի եւ Կոյթ. 238. 10, Մեծ-Օքա գաղ. զինւորների նէր. 14. 01, Պաշարւած գաղ. Հրայր եւ Անդրանիկ խմբ. 207. 10, Ազգասէր դուրգարներից 9. 60, Հրայր խ, 20. 10, Բամբակ գաղ. Մասիս խ. 12. 50, Բանդւած գաղ. խմբ. Հերոս 67, Աւոս-Երկաթ 44. 50, Աւոս Թաթուլ 31, Վրէժ 11. 30, Մամիկոնեան 33, Բուն-Բամբակ Փ. Մ. 58, Լուսաւորիչ 12. 50, Լան-Մաղ գաղ. խմբ. Ծիծեռնակ 12. 85, Թուման 38, Արշալոյս 16. 70, Ազնուական 13. 50, Վասպուրական 19. 25, Անի 6. 60, Անանուն 2. 15, ՀԵԹՈՒՄԵԱՆ ՇՐՋԱՆ նես. խմբ. Մշակ 55, Կայծակ 5. 50, Վազգէն եւ Արարատ 6. 55, Բողոք եւ Զինւորապետ 4. 85, Ոսկանապատ 7. 60, Բողոք 4. 55, Վիշապից եւ Կեսարացից նուէր 10, Բոզնագուլից 10. 74, Իշխանից 12, Առաքելից 9, Ալէքսանից 4, Բարսեղեանից 10, Վարդանեանից 10, Կենդրոնից 75, Ռուսասոնով 5, Լեւոն Սարգսեան 5, Սարգ. Յակոբեան 3, Պառաւ 1. 70, Աղաջան Ստեփանեան 29. 43, Եղիցից 25. 20, Բազուկ 18, Այծեամ Ն. Աղ. Սիմ. 45, Արմայից 27, Բար Աղբիւրից 13. 80, Տիգակից 18, Բազելից սմբ. ամ. 10, Համայակից 10, Պետրոսից 3. 10, Եղիազնում Աքորից 10, Ծառաստանի խմբերից՝ Զայլաղ 14. 85, Արեւալոյս 5. 75, Երկաթ 4. 90, Վարդ 10. 90, Փունջ 23. 30, Եւս 13, Արմաշի 19. 75, Նեսածից 15, Արտաւազդ 4. 05, Խնջոյքից 115, Կայարան 11. 40, Փունջ 12, Վարդ 18. 30, Թումանից 5. 80, Նուէր Նոյեմիից 25, Բամբակ գաղ. Սերոբ Աղբիւր խ. 160, Նոյն գաղ. Մասիս խ. 33. 50, Պաշարւած գաղ. Հրայր խ, 23. 60: Գումար 2702 ռուբ. 07 կոպ.

Ռ ԿՈՄԻՏԷ՝ (1905 թ. յունուար—ապրիլ) անդամներ. Պ. 10 ռ. Գ. 4, Ծ. 20, Գ. Ա. 8, Մ. Տ. Մ. 4. 50, Ն. 5, Վ. 4, Բ. 5. 50, Ա. Ս. 10, Մ. 7, Պ. 4, Մ. 10, Մ. 10, Բ. Ս. 8, Մ. 5, Խ. Մ. 14, Ա. Վ. 5, Մ. 6. Գ. Ա. 2. 50, Ե. 6, Մ. Ս. 6, Մ. 10, Տ. Ս. 7, Կ. Մ. 3, Ա. Տ, 10, Ա. Տ. 20, Ա 16, Լ. 18, Հ. Ա. 15, Գ. Տ. Գ. 5, Մ. 15, Ա. Գ. 6, Ն. Ն. 5, Բ. 5, Հ. Խ. 10, Մ. Բ. 3. 50, Մ. 2. 50, Պ. 5, Գ. 2, Ա. 10, Աքովեան 34, նեսեւեալ խմբ. Զարմայր 8. 30, Կոկոն 6, Սէր 10. 60, Վրէժխնդիր 34. 60, Ծերուկ 22. 70, Ալագեազ Բ. 2, Կայծեր Յուսոյ 8. 13, Ալիշան 56. 80, Աղբիւր 11. 70, Անդրանիկ 19. 10, Նովրուզ 12, Կայծակ Վաղարշակ 5. 40, Գողթան 22. 50, Բադս 11. 50, Կովկաս 5, Անի 7. 30, Սարդար 7. 39, Վազգէն 26. 05, Արփնզ 25, Ռուսոց Գէորգ 4. 20, Ռոստոմ 20. 30, Մուրազ Ա. 10. 60, Արծազանգ 18. 30, Մասիս 44. 38, Դուին 24, Հրաբուխ 33. 91, Ռումբ 7. 50, ԱԼԱԶԱՆԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ Ռոստոմ 15. 40, Հարազատ 15, Փոքրիկ 10, Ռոստոմ 12. 60, Նոր լոյս 9. 80. Շերօ-Զաքօ 27. 17, Զէյթուն Բ. 5. 12, Նոր Սերունդ 12. 80, Թուման 6, Անդոկ 9. 80, Թաթուլ 14. 62, Բաջ-Բերունի 3. 40, Մարտին 13. 70, Ալագեազ 7. 58, Արամ 10. 95, Տաթեւ 6. 88. Ծաղիկ 30, Ապառիկ Մ. ի նաշիւ թերթ № 57. 25, Զինւորներից յետ ստացած անցագրի համար 16, Ռ ԿՈՄԻՏԷԻ նեսեւեալ խմբերից՝ Ալագեազ Բ. 2, Փայլակ 5. 50, Թուման 4. 95, Ոստանիկ 21. 05, Ուրախ 1. 95, Ներկայ Բուլէ 44. 50, Ալիշան 39. 50, Սասուն 17. 60, Նոր Լոյս 20. 50, Ծաղիկ 33. 60, Կոկոն 6, Պետօ 16. 60, Հրոսակ 23, Շամօ 4, Զէյթուն 10. 79, Ճորա-Պանակ 19. 10, Ռաշիդ 19. 80, Երւանդ 7, Վազր 37. 50, Թուման 16. 81, Ռուսոց Գէորգ 6. 05, Զանգ Բ. 12. 80, Անի 4, Հրայր Բ. 15, Վառ Յոյս 6. 20, Սարդար 5. 63, Սէր 24. 08, Կայծակ-Վաղարշակ 6. 75, Ապրօ 11, Անդրանիկ 24. 90, Կայծակ Յուսոյ 21. 08, Վրէժխնդիր 30, Վրէժ 16 20, Ծաղիկ 21. 70, Կոկոն 5, Ալագեազ 4. 80, Կովկաս 10, Աբրօ 14. 65, Անդրանիկ 25. 40, Աղբիւր 12. 10, Կարօ 21. 20, Վազգէն 33. 12, Թուման Ա. 15. 55, Ալիշան 68. 40, Սասուն Ա. 21. 30, Սասուն Բ. 8, Սասուն Գ. 3. 70, Զանգ 23. 50, Ռուսոց-Դէվոտ 7. 76, Խ. Մ. 14, Տ. Ս. 7, Մ. 10, Խ. Մ. 14, Անյաղթ 19. 32, Խ. Բ. 64, Տ. Ս. 7, Խ. 25, Ա. Տ. 20, Մ. Գ. 7, Բ. 9, Ա. Ս. 10, Բ. 10, Յ. Պ. 18, Հ. Խ. 20, Մ. Բ. 7, Մ. 5, Պ. 10, Գ. 4, Ծ. 20, Ս. Բ. 28, Ս. Տ. Գ. 11. 20, Գ. Ա. 12, Օր. Լուսիկից 3, Թ. Ն. Է. 500, նեսեւեալ խմբերից՝ Վան 18. 80, Մուշ 3, 86, Մրրիկ 10. 40, Թուման Բ. 6. 40, Թորգոմ-Թուման 9, Մուշ 4. 74, Արծիւ 3. 80, Անի 4. 41, Կայծակ-Վաղարշակ 7. 75, Մասիս 38. 09, Թուման Բ. 6. 25, Հրայր Ա. 12. 30, Պետօ 14, Հրայր Բ. 12, Առիւծ 8. 80, Եւս 27. 90, Ալագեազ Բ. 2, Վազր 23. 15, Կեանքի առիթ 12. 45, Սարդար 4. 50, Ոստանիկ 35. 70, Շերօ-Զաքօ 22. 48, Նոր-Սերունդ 16. 30, Վան 21. 25, Բաջարանց 5, Եռիտասարդ 30. 60, Դաշոյն 25. 30, Փոթորկած Սուր 6. 30, Լոյս 12 70, Փայլակ 8. 80, Բաջբերունի 5, Անյաղթ Դրամակ. 9. 64, Տաթեւ 10, Բաֆֆի 12. 20, Աբովեան 19, Հրաբուղխ 23. 55, Վրէժ 9. 70, Անտօն 18. 60, Սէր 10. 55, Նովրուզ 9. 90, Արփնզ 48, Ռուսոց Գեւորգ 7. 35, Աւետարանոց 10. 40, Ռումբ 8, Կայծակ-Վաղարշակ 6. 75, Զէյթուն 8. 05, Աբրօ 11. 95. Ներկայ Բուլէ 51, Երւանդ 10, Գողթան 32. 64, Ռոստոմ 6. 75, Առաջադիմութիւն 28. 70, Անյաղթ Դրամակ. 9. 64, Շափօ 3, Վազգէն 20. 90, Անի 6. 45, Կովկաս 5, Դուին 45, Կոկոն 5, Ծաղիկ 30. 38, Հրայր Ա. 7. 50, Անդրանիկ 29. 45, Ծերուկ 18. 50, Աղբիւր 15. 38, Ռաշիդ 25, Մուրազ 14, 34, Ճորա-Պանակ 22, Ուխտաւոր 9. 75, Նորահաս 10. 79, Ոսկէ-Զոր 9. 30, Սասուն Բ. 3, Վրէժ 12. 50, Աքովեան 10. 50, Թուման 6. 60, Ոստանիկ 17. 20, Արծիւ 7. 88, Բաջարանց 3, Վազր 24. 20, Կեանքի Առիթ 12. 88, Զարմայր 9. 10, Նոր-Սերունդ 12, 60, Կարկուտ 34. 20, Շերօ-Զաքօ 12. 45. Լ. Ս. 21, Յ. Խ. 5, Կ, Մ. 6, Տուգանք 1, Խ. Մ. 14, Տ. Պ, նուէր 5. 40, Յ. Մ. 5, Խ. Օ, 5, Սարդար խ. եւ մի ոմն 5, 38, նուէր Ս. արհեստաւորների միջոցաւ 20, ԱԼԱԶԱՆԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ՝ նեսեւեալ խմբերից՝ Խիզախ 30, Երկունք 28, 75, Հերոսունի 15, Ծլած 15, Համեստ 18. 80, Ռոստոմ 35, 30, Ծերունիկ 24. 85, Լեւոնիկ 9. 70, Նիզակ 8. 10, Ներկա-Բուլէ 6, Արծազանգ 12. 30, Թուման Բ. 9. 76, Վառ-Յոյս 5. 95. Դրօշակ 45, Ռոստի Պիկնիկից 3, 95: Գումար 4348 ռուբլի 06 կոպէկ:

Ընդհանուր գումար 11540 ռուբլի եւ 66 կոպէկ:

Ամերիկայի Կեդ. Կոմիտէ՝

ՄԱՆՉԵՍՏՐԻ ԿՈՄԻՏԷՆ՝ Խ. Յ. 27 տոլար, Յ. Ա. 43, Պ. Օ. 21, Ս. Ա. 15, Շ. Տ. Խ. 21. Հ. Խ. 10, Ա. Մ. 15, Յ. Գ. 16, Ս. Փ. 10, Յ. Ն. 15, Լ. Ն. 15, Պ. Կ. 16, Ա. Գ. 5, Գ. Տ. Գ. 33, Ոմն 1, Յ. Պ. 2, Ոմն 5, Զ. Ֆ. 1, Ա. Ն. 1, Ա. 50, Ա. Մ. 1, Ե. Ճ. 2, Ա. 1, Ղ. 1, Ն. Յ. 2:

Գումար 279 տոլար. 50 սէնթ.

ՈՒՕՔԷԿԸՆԻ ԿՈՄԻՏԷ՝ (1904 եւ 1905 հանգանակութիւնը) Թ. Գ. 10 տոլար, Ա. Ա. 10, Յ. Խ. 25, Մ. Փ. 15, Կ. Պ. 10, Մ. Մ, 15, Ե. Տ. Յ. 2, Ս. Յ. 5, Է. Ա, 2, Տր. Մ. 1, Ոչկուսակցական մը 2, Կ. Թ. 1, Պետօին պատկերը Անուրդի դրւած Մ. Փ, գնած 8. 25, Թ. Ա, 1, Յ. Տ. Տ. 50, Յ. Շ. 5, Հ. Գ. (մուտք) 1, Պ. 1. 29, Ե. 5, Հ. Մ, 3, Գ. Պ, 2, Օ, Թ, 2, Ուրիշ ժողովի մը պնակէն 2. 55, Օ. Պ. 1, Գ. Ս. 1, Ս. Խ. 1, Ս. Յ. 1, Մ. Կ, 40, Գ. Մ, 11, Գ. Է. 16, Յ. Ա. 10, Յ. Պ. 1, Յ. Տ. Մ. 4, Յ. Գ. (մուտք) 1, Խուլացիներու տանը հանգ, 2. 50, այլ եւ այլ Աղբիւրներէ 20. 60, Մ. Պ. 11, Թ. Գ. 25, Հ. Գ. 12, Գ. Ի. 2, Գ. Ի. 1, Յ. Մ. 5, Օ. Պ. 15, Ոմն 25, Գ. Պ. 25, Պ. Կ. 1, Թ. Մ. 20, Կ. Պ. 20, Ոմն 10, Գ. Է. 30, Յ. Գ. 30, Ա. Մ. 20, Թ. Ս. 55, Ա. Ա. 50, Ղ. Տ. Ղ. 1, Յ. Տ. Տ. 60, Ոմն 1, Կ. Թ. 10, Գ. Ո. 15, Ոմն 5, Ոմն 2, Խ. Շ. 41, Յ. Ս. 10, Տիկ. Ա. Մ. 2, Գ. Մ. 10, Մ. Մ. 1, Փ. Ե. 30, Ոմն 5, Տիկ. Կ. Յ. 2, Խ. Ա. 5, Ս. Է. 2, Ոմն 2, Թ. Ս. 20: Գումար 870 տոլար 10 սէնթ:

Ընդհանուր գումար 1149 տոլար 60 սէնթ: